Նույն ագրեսիվ դեմքերը, նույն անադեկվատ կեցվածքը, նույն բառապաշարը: Անգամ եկեղեցու տարածքում իրենց չեն կարողանում դրսեւորել: Մեկը սեռական բնույթի հայհոյանքներ է տալիս, մեկը սիգարետ է ծխում, մյուսն արեւածաղիկ է ուտում, մյուսը բղավում ու անիծում է: Այնտեղ տեսանք նաեւ հայտնի մարզպետներ, քաղաքապետեր:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանը հասարակությանը ցույց է տալիս, թե՝ տեսեք, ինչպիսի նոր եւ ժամանակակից սպառազինություն ենք ձեռք բերել ձեր դեմ, այդ ամենը գնվել է մեր արեւմտյան հովանավորների աջակցությամբ, ինչը նշանակում է, որ նրանք մեզ լիարժեք թույլտվություն եւ հավանություն են տալիս՝ այդ զենքը ձեր դեմ ուղղելու համար:

Կարդացեք՝ էջ 5

Սահակաշվիլին երազում էր ստեղծել արդի ռացիոնալ պետություն, Եկեղեցին ձգտում էր մնալ ազգի պատմական հիշողության ու բարոյական անաղարտության պահապանի դերում: Նա պարտվեց, որովհետեւ չնկատեց, որ Վրաստանում, ինչպես Հայաստանում, քաղաքականությունն ինքնության հետ կապված է եւ անհնար է պատկերացնել առանց Եկեղեցու:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 174 (4076), 4 նոյեմբեր, երեքշաբթի, 2025

www.hraparak.am

«Նախ դպրոցներ, թե՞ գործարաններ կառուցել», «Մեր ձեւով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանի բարձրացրած այս հարցի հետ կապված՝ իշխանականները աղմուկ բարձրացրին, թե տեսեք՝ դեմ են դպրոցների կառուցմանը: Իսկ Կարապետյանն ասել էր, որ նախ պետք է գործարաններ կառուցվեն, որից հետո՝ դպրոցներ, եւ դա բացատրել էր իրենց ընտանիքի փորձով, երբ 20 տարի առաջ Լոռու մարզի իրենց գյուղում կառուցել են գերժամանակակից դպրոց, վերանորոգել ճանապարհներ, տներ: «Սակայն մարդիկ էլի շարունակում էին հեռանալ, որովհետեւ մարդը եթե չունի աշխատանք, նա չի մնալու, ուզում ես՝ ոսկուց քաղաք սարքիր, նվիրիր: Մարդկանց պետք է ապահովել սկզբնական հացով, ապրուստով եւ հետո նոր՝ լավ պայմաններով»: Առաջնահերթությունը պետք է լինի հարկեր վճարող գործարանների ստեղծումը, որոնք էլ հետագայում կֆինանսավորեն դպրոցների շինարարությունը, այլ ոչ թե վարկերով կկառուցեն: Կառավարության մեր աղբյուրն ասաց, որ ընդամենը 2 ամիս առաջ դեմոգրաֆիկ զարգացումների վերաբերյալ հույժ գաղտնի զեկույց է պատրաստվել, որտեղ տարբեր գերատեսչությունների, փորձագետների (այդ թվում՝ ոլորտի հայտնի մասնագետներից մեկի՝ «Ամերիա» խորհրդատվական ընկերության ղեկավար Տիգրան Զրբաշյանի) ուսումնասիրություններն են ներառված, եւ որը հաստատում է Նարեկ Կարապետյանի ասածը: Այդ զեկույցի եզրահանգումն այն է եղել, որ մեր երկրի դեմոգրաֆիական վիճակը հաշվի առնելով, արդյունավետ քաղաքականություն չեն վարում, քանի որ դպրոցներ են կառուցվում, բայց երեխա չկա, որ հաճախի այնտեղ, ուստի թիրախները պետք է փոխել:

Վերջերս ՔՊ վարչությունը հայտարարեց, որ 2026 թ. ընտրությունների ՔՊ նախընտրական շտաբը կղեկավարի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, քարոզչական պատասխանատուն կլինի Վահագն Ալեքսանյանը: Պարզվում է, շտաբի մյուս անդամներն էլ են Փաշինյանի վստահելիները՝ քիչ բացառությամբ: Օրինակ, ֆինանսական հարցերով պատասխանատու է նշանակվել Փաշինյանների ընտանեկան «գանձապահ», «Հայկական ժամանակի» նախկին հաշվապահ Արուսյակ Մանավազյանը, մարզերի պատասխանատուն կլինի Դավիթ Խուդաթյանը՝ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարը, որը նաեւ ի պաշտոնե մարզպետների «վերակացուն» է: Եվ Երեւանի պատասխանատու է նշանակվել քաղաքապետ Տիգրան Ավինյանը, որի եւ Փաշինյանի ոչ այնքան ջերմ հարաբերությունների մասին նաեւ ՔՊ-ում են խոսում:

Հույս չունենաք

Եթե Վեհափառը կամ ընդդիմությունից որեւէ մեկը հույս ունի, որ նա ինչ-որ պահի հոգնելու է եւ կանգ առնի, չարաչար սխալվում է: Եթե ինչ-որ մեկին թվում է, թե նա ամաչելու է օրենքն ու չգրված օրենքներն այսքան հաճախ խախտելուց եւ ինչ-որ պահի ձեռնպահ կմնա անմեղ մարդկանց կալանավորելուց, կրկին չարաչար սխալվում է: Եթե որեւէ մեկը հույս ունի, որ մի օր խիղճը, հայի գենը, ազգային զգացումներն արթնանալու են իր մեջ, եւ սկսելու է հայանպաստ քայլեր անել, նորից սխալվում է: Եթե որեւէ մեկը կասկածում է, որ Թալինում եւս մի ապօրինի պատարագ անելուց հետո Եկեղեցու դեմ նոր քայլ չի ձեռնարկելու, հոգեւորականների որսը դադարեցնելու է, թող հույսեր չփայփայի: Եթե որեւէ մեկը կարծում է, որ նրա ձեռնարկած քայլերը լցնելու են թիմակիցների համբերության բաժակը, նրանց մոտ արթնացնելու են քնած ինքնագիտակցությունը, օրենքի, օրինականության գիտակցումը, եւ նրանցից որեւէ մեկը երբեւէ մի աննշան դիմադրություն է ցույց տալու նրան, նորից սխալվում է: Եթե որեւէ մեկը կարծում է, որ նրա համար կա որեւէ կարմիր գիծ, ասենք՝ ընտրություններ չի կեղծի, քանի որ հազարավոր անգամներ ասել է՝ «ընտրակեղծարարության էջը մեզանում փակված է», ապա նրան նույնպես խոր հիասթափություն է սպասվում, որովհետեւ եթե նախկինում նրա ասածների ու այսօրվա ասած-արածների միջեւ որեւէ չնչին կապ լիներ, ապա մենք վաղուց դա նկատած կլինեինք: Պարզ է, որ մարդը չունի իր խոսքն ու խոստումները դրժելու հետ կապված որեւէ բարդույթ, ապօրինություններ կատարելու առումով որեւէ սահմանափակում: Եվ չնչին չափով անգամ մտահոգված չէ իր հեղինակության, իր վարկանիշի համար: Նա անցել է ռուբիկոնը եւ էքսպերիմենտ է դրել մեր ժողովրդի վրա՝ տեսնենք, թե մինչեւ երբ ու ինչքան կդիմանա հայ ազգն այս անօրինություններին:

Չնայած Հովհաննավանքում ֆեյք պատարագները ձախողվեցին, երկրորդ կիրակի օրն ավելի քիչ մարդ կար, քան նախորդ կիրակի, ընդ որում մեծ մասը՝ ՔՊ-ականներ, «պղծության» երկրորդ արարից անմիջապես հետո Փաշինյանը հայտարարեց, որ հաջորդ կիրակի էլ Թալինի Սբ Աստվածածին եկեղեցում է պատարագի մասնակցելու՝ Տեր Թադե Թախմազյանի մատուցմամբ: Նա միացել էր Հովհաննավանքի պատարագին եւ դեմ դուրս եկել Եկեղեցուն: Թվում էր, թե 2 անգամ խայտառակվելուց հետո Փաշինյանն այլեւս չի փորձի, սակայն թիմում ասում են, որ խնդիրը ոչ այնքան պատարագի մասնակիցների թիվն է, որքան այն, որ նա փորձում է քայլ առ քայլ հոգեւորականներ պոկել Մայր Աթոռից եւ դարձնել իր «կրոնի» հետեւորդ: Թալին գնալու խորհուրդն էլ այն է, որ մյուս թեմերում եւս ոգեւորվեն, եւ նոր հոգեւորականներ միանան այս արշավին:

ՆԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԴԵԲՈՇ ԵՆ ԱՐԵԼ

Պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի եւ անդամ Հայկ Սարգսյանի միջեւ երեկ «դեբոշ» է եղել՝ «2026 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ: Փակ քննարկման ժամանակ, որին մասնակցել են նաեւ ԱԱԾ տնօրեն Անդրանիկ Սիմոնյանը, Պնախարար Սուրեն Պապիկյանը, ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը եւ կառավարության այլ անդամներ, կրքերը թեժացել են, երբ Հ. Սարգսյանը դիմադրել է եւ չի կատարել Քոչարյանի պահանջը՝ հեռացնել իր նոութբուքը: Քոչարյանն ասել է՝ եթե հեռախոսները հավաքում եւ տեղադրում են հատուկ չգաղտնազերծվող սարքում, ապա, նույն տրամաբանությամբ, սենյակում նոութբուք էլ չպիտի լինի, սակայն Սարգսյանը հակադրվել է, փորձել է անգամ Փաշինյանի անձով սաստել Քոչարյանին, թե վարչապետի հետ հանդիպմանն էլ է իր նոութբուքով գնում: Սակայն նիստը վարողն անդրդվելի է մնացել եւ պնդել է պահանջը: Միջամտել է Մխիթար Հայրապետյանը՝ միանալով Քոչարյանի պահանջին, ինչից հետո միայն Սարգսյանը դուրս է եկել սենյակից եւ վերադարձել առանց նոութբուքի: ՔՊ-ում ասում են, որ սույն անձանց հարաբերությունները լարված են: Հայկ Սարգսյանը կարծում է, որ Քոչարյանն է իշխող թիմին այնպես «եփել», որ մերժեն իր հեղինակած նախագիծը՝ փողով բանակից ազատվելու, ավելի ճիշտ՝ կարճ ժամկետով ծառայելու վերաբերյալ: Պատգամավորը փորձել է վերջերս նորից այդ նախագիծը փոքր-ինչ ձեւափոխված օրակարգ բերել, սակայն ՔՊ-ում կրկին դիմադրել են: Հայկ Սարգսյանը խնդրել է Պապիկյանին, որ այն ներկայացնի Փաշինյանին, ու հիմա սպասում է պատասխանի:

TRIPP-ի համաձայնագիրը ստորագրելիս պետք է լուծվեր հայ ռազմագերիների հարցը

ԳԵՐԻ

«Դրապարակի» զրուցակիցն արգենտինահայ փաստաբան, Տուկումանի համալսարանի ցեղասպանության ուսումնասիրությունների պրոֆեսոր եւ Բուենոս Այրեսի Սենատի թեկնածու **Լուսիանա Մինասյանն** է, որը զբաղվում է տուժած հայերի շահերի պաշտպանությամբ:

- Մեզ հետ նախորդ զրույցում հայտնեցիք, որ Դուք եւ Ձեր իսպանացի կոլեգա Այտոր Մարտինես Խիմենեսը դիմում եք ներկայացրել Անձանց կամայական կալանավորման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբին (UNWGAD)՝ Բաքվի բանտում ապօրինաբար կալանքի տակ գտնվող Վիգեն Էուլջեքջյանի անհապաղ ազատ արձակման պահանջով: Պնդում եք՝ նրա մեղադրանքներն անհիմն են. նա չէր կարող վարձկան լինել, քանի որ ՀՀ քաղաքացի է: UNWGAD-ից արձագանք կա՞:

- Դիմումը ներկայացվել է սովորական ընթացակարգով: Մոտ մեկ տարի առաջ նախորդ դիմումը ներկայացվել է անհետաձգելի ընթացակարգով, որի պատասխանը չի ստացվել եւ նույնպես արձագանք էր պահանջում Բաքվից: Մենք վստահ ենք վերջնական արդյունքի մեջ, չնայած գործընթացը ժամանակ է պահանջում:

- Հունվարից Բաքվում ընթանում է Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարների եւ մյուս հայ գերիների դեմ շինծու մեղադրանքներով «դատավարությունը»: Հայտարարեցին, որ այն արդեն ավարտվել է, առաջիկայում սպասվում է մեղադրողի ճառը: Նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի գործը քննվում է առանձին: Դուք զբաղվո՞ւմ եք նաեւ մեր այս հայրենակիցների իրավունքների պաշտպանությամբ եւ ի՞նչ վճիռ եք կանխատեսում:

- Մի քանի իրավաբանական թիմեր աշխատում են բոլոր բանտարկյալների շահերն աստիճանաբար ներկայացնելու ուղղությամբ: Որոշ ընտանիքներ դեռ որոշում են՝ տա՞լ իրենց համաձայնությունը, թե՞ ոչ, քանի որ անհնար է գրավոր համաձայնություն ստանալ անմիջապես ռազմագերիներից: Մինչ այդ մենք հետեւում ենք ընթացակարգերի ընթացքին, չնայած դատավարությունները կեղծ են, կամայական եւ անօրինական:

- Մինչ դուք ջանքեր եք գործադրում՝ պաշտպանելու Ադրբեջանում ապօրինի կալանքի տակ գտնվող հայերի իրավունքները, ՀՀ իշխանությունները, ըստ էության, «փակված» են համարում ոչ միայն կորսված Արցախի, այլեւ Ադրբեջանում խոշտանգվող եւ դատապարտվող հայ գերիների ճակատագրի հարցը: Ինչպե՞ս կգնահատեք Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը:

- Հայաստանի, Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի միջեւ ստորագրված TRIPP-ի համաձայնագիրը պետք է լուծեր ռազմագերիների հարցը: Համեմատության համար, Միացյալ Նահանգների նախագահը նույնպես դեր է խաղացել Իսրայելի եւ ՀԱՄԱՍ-ի միջեւ հրադադարի համաձայնագրում, որտեղ գերակայություն էր տրվում պատանդների ազատ արձակմանը՝ ոչ միայն ողջերի, այլեւ մահացածների վերադարձի հարցում: Մինչ օրս դեռեւս դժվարություններ կան ՀԱՄԱՍ-ի կողմից այս պայմաններին համապատասխանելու հարցում, եւ որոշ զոհվածների մարմիններ կարող են երբեք չգտնվել: Հետ նայելով TRIPP-ի համաձայնագրի ստորագրմանը, ավելի լավ կլիներ հստակ բանակցել բանտարկյալների, գուցե՝ նաեւ որոշակի բռնի անհետացումների վերաբերյալ, որոնց շուրջ մարդու իրավունքների պաշտպաններն ու ներկայացուցիչները մտահոգություններ են հայտնել մի քանի տարի շարունակ:

- Ավելին, միջազգային հարթակներում այդ հարցն Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից բարձրաձայնվելուց հետո Փաշինյանն ու գործող ռեժիմը քաղաքական հալածանքներ սկսեցին Վեհափառի դեմ, Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կալանավորվեցին արքեպիսկոպոսներ, քահանաներ: Այս ամենին հետեւո՞ւմ եք, եթե այո՝ ի՞նչ կարող եք անել իրավական, իրավապաշտպան հարթության մեջ:

- Ինչ վերաբերում է Հայ եկեղեցուն, ես չունեմ ուղիղ մասնակցության որեւէ միջոց: Սփյուռքի տեսանկյունից, Հայ եկեղեցին հայրենիքի հետ հիմնական կապն է, եւ մենք ձգտում ենք պահպանել այդ կապերը: Անձամբ ես վերջին տասը տարիների ընթացքում աշխատել եմ որոշ հայ եպիսկոպոսների հետ, հիմնականում՝ երկրաշարժից հետո բարեգործական նախաձեռնությունների շրջանակներում (նույնիսկ 30 տարի անց), ինչպես նաեւ՝ եկեղեցական եւ պատմական պատասխանատվության կոմիտեների ներկայացուցիչների հետ: Դրանից բացի, ես կապի որեւէ այլ միջոց չունեմ:

- Որքան էլ ցավալի է խոստովանել, Արցախի, հայության հիմնարար եւ ոտնահարված իրավունքների համար պայքարող գործիչների դեմ արշավում Երեւանն ու Բաքուն համաբայլ են գործում, եթե չասենք՝ նույն օրակարգով:

- Մեր աշխատանքը սկսվել է 44-օրյա պատերազմի ժամանակ՝ սփյուռքից, աշխարհի տարբեր երկրների գործընկերների հետ միասին: Երբեմն ակնկալել ենք Հայաստանի կառավարության համագործակցությունը, բայց մեծ մասամբ աշխատել ենք անկախ: Մենք չենք զբաղվում քաղաքականությամբ, քանի որ մեր աշխատանքի նպատակը ոչ միայն բանտարկյալներին, այլեւ եւ հաճախ՝ առաջին հերթին, նրանց ընտանիքներին աջակցելն է: Այդ առումով մեր գլխավոր նպատակն է՝ շարունակել աշխատել այս ընտանիքների բարեկեցության եւ, որտեղ հնարավոր է՝ փոխհատուցման համար: Ես Հայաստանի քաղաքացի չեմ, բայց այդ կարգավիճակում գոհունակություն ունեմ, երբ այս բոլոր կարիքավոր մարդկանց աջակցություն են ցուցաբերում, մինչեւ նրանց սիրելիներն անվտանգ վերադարձվեն:

- Արդյո՞ք այս բոլոր, այդ թվում՝ Հայաստանում եւ Ադրբեջանում շարունակվող ապօրինությունների կասեցման համար միջազգային ճնշումը բավարար է:

- Միջազգային ճնշումը հարաբերական է եւ կարող է հանգեցնել ավելի լավ արդյունքների՝ կախված բազմաթիվ գործոններից, որոնցից շատ կարեւոր է աշխարհաքաղաքականությունը: TRIPP-ի համաձայնագիրը կարող է դրական ազդեցություն եւ հետեւանքներ ունենալ Հայաստանի համար, այն առումով, որ երկրի ազդեցությունը կարող է մեծանալ որպես ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի հետ նախագծի մասնակից: Իհարկե, կա անհապաղ անհրաժեշտություն՝ ազատ արձակելու այն բանտարկյալներին, ովքեր չեն կարող սպասել այս զարգացումներին:

Արա ԱԼՈՅԱՆ

Նիկոլ Փաշինյանի քավորը նոր տարածքներ հանձնելուի անոնսն արդեն արել է

Հոկտեմբերի 31-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, պատասխանելով Հայաստանի վերահսկողության տակ գտնվող, Ադրբեջանին պատկանող հողերի մասին պաշտոնյաների արած հայտարարությունների մասին լրագրողների հարցերին, ասել է. «Ժողովուրդ ջան, դա լրիվ պարզ երեւում է, էդտեղ տհենց մեծ գաղտնիք չկա, դուք լավ գիտեք, որ Ոսկեպարի հատվածում, Բերքաբերի հատվածում նման տարածքներ ունենք»: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, 2021թ. ապրիլի 8-ից Տավուշի մարզպետ աշխատող Հայկ Ղալումյանը երեւի «մոռացել է», որ խորհրդային ժամանակներից Բերքաբեր գյուղին պատկանող, ներկայում Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ փաստացի սահման դարձած Ջողազի ջրամբարի ձախ ափին Բերքաբերն ունի մոտ 860 հեկտար տարածք, որն ադրբեջանցիները մշակում են, ցորեն են ցանում: Նա նաեւ «մոռացել է» լրագրողներին ասել, որ 2024-ին սահմանազատման անվան տակ, միակողմանի կերպով, ապօրինի ձեւով Բերքաբեր գյուղի հատվածում, Ղազախի շրջանի Ղզըլ Հաջիլի գյուղին հարակից գոտում Ադրբեջանին են հանձնվել մի շարք հայկական հենակետեր: Այդ ժամանակ Բերքաբերի բնակիչների շրջանում լուրեր էին տարածվել, որ սահմանազատման հաջորդ փուլում Բերքաբերին է վերադարձվելու գյուղին պատկանող 860 հեկտար հողը: Մի քիչ թարմացնենք նրա հիշողությունը:

2025թ. հունվարի 30-ին Երեւանում ընդունելով Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեին՝ Նիկոլ Փաշինյանն ասաց, որ վրաց գործընկերոջը ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացից մանրամասներ, հայտարարելով. «Երկու երկրների միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ սահմանազատման հաջորդ փուլը սկսել Հայաստան-Վրաստան-Ադրբեջան միջպետական սահմանների հատման կետի անմիջական հարեւանությամբ»: Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի սահմանները հատվում են մի կետում՝ Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի Ղիասի քար տարածքի մոտ: Սակայն Կիրանց գյուղին պատկանող մոտ 15 հեկտար հողերը, Բերքաբերի սահմանագոտում եւ Կիրանց-Բաղանիս հատվածում ավելի քան 30 տարի ամրացված դիրքերն Ադրբեջանին հանձնելուց հետո հայ-ադրբեջանական սահմանազատումը շարունակություն չունեցավ: Հայկ Ղալումյանը լրագրողներին ասել է, թե նրանք լավ գիտեն, որ Բերքաբերի եւ Ոսկեպարի հատվածներում Ադրբեջանին պատկանող հողեր կան, սակայն այդպես էլ չի մանրամասնել, թե այդ ի՞նչ հողեր են, երբվանից են պատկանում Ադրբեջանին, կամ՝ լրագրողները որտեղի՞ց պետք է դա լավ իմանան: Մարզպետը չի հիշել, որ Տավուշի մարզում հազարավոր հեկտար հողեր 1990-ականների սկզբից գտնվում են Ադրբեջանի զինուժի վերահսկողության ներքո:

Իջեւան համայնքի Վազաշեն գյուղից 1400 հեկտար գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ եւ չեզոք գոտում: Այդ հողերի մի մասում ադրբեջանցիներն ամեն տարի ցորեն են ցանում: Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղի շուրջ 1000 հեկտար հող գտնվում է Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ: Բերդ համայնքի սահմանամերձ տարածքներից շատ մեծ տարածքներ եւս գտնվում են Ադրբեջանի վերահսկողության ներքո: Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջեւան եւ Բերդ համայնքներին պատկանող հազարավոր հեկտարներ գտնվում են Ադրբեջանի տիրապետության տակ: 2020թ. հուլիսի 12-ին Մովսես գյուղի սահմանագոտում նախահարձակ լինելով՝ Հայաստանի զինված ուժերը 2 դիրք ազատեցին, սակայն այդ տարածքում ՀՀ-ին պատկանող հարյուրավոր հեկտար հողեր Հայաստանի անկախացումից հետո գտնվում են Ադրբեջանի վերահսկողության տակ: Մարզպետ Ղալումյանին հարցում եմ արել, թե Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի տարածքներից ընդհանուր քանի՞ հազար հեկտար է այժմ գտնվում ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո: Մարզպետը պատասխանել է. «Տիրապետման մակերեսի չափը հնարավոր է բացահայտել փաստացի մարտական հերթափոխի սահմանագծի քարտեզագրման եւ գույքագրումից հետո»: Փաշինյանի քավոր մարզպետը «չի հիշում» ադրբեջանական օկուպացիայի տակ գտնվող հազարավոր հեկտար հողերի մասին, սակայն հայտարարելով Ոսկեպարի ու Բերքաբերի հատվածներում Ադրբեջանին պատկանող հողերի վերաբերյալ՝ փաստորեն, անոնս է արել տարածքային նոր զիջումների մասին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՍՈՒՄՆ

ՍՊԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԱՐԾԵՍ ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՎՐԱ ՉԻ ԱՊՐՈՒՄ

ՀԱՅ-ները մոտ մեկ շաբաթ առաջ գուժեցին՝ որոնվում է 3-ամյա Տիգրան Օհանեզովը: Իսկ երեկ տեղեկացանք, որ սարսափելի հանգուցալուծում է դրան հաջորդել, ըստ ՆԳ նախարարի՝ երեխային խեղդել է սեփական հայրը՝ Արմեն Օհանեզովը: Բայց կատարվածն այնքան սոսկալի է, որ Օհանեզովի համագյուղացիները չեն հավատում: «Անհավանական, հանելուկային դեպք է»,- ասում է Ծափաթաղի բուժքույրը՝ Օհանեզովների տան մոտ հավաքված լրագրողներին: Արմեն Օհանեզովը ձերբակալված է: Քրեական վարույթ է հարուցված՝ սպանության հոդվածով: Երեխայի մարմինը նոյեմբերի 2-ին գտել են փրկարարները, Ծափաթաղ բնակավայրի հարակից դաշտում, Ձիլ գյուղի ցուցանակից ոչ հեռու: Մեկ օր անց սպանության վարկածը դրվեց շրջանառության մեջ, եւ նոյեմբերի 3-ին Արփինե Սարգսյանը, խախտելով անմեղության կանխավարկածը, հայտարարեց. «Նախնական տվյալներով, սպանություն է՝ երեխայի հայրը խեղդամահ անելու ճանապարհով սպանել է փոքրիկին: Այս վարկածը, ի թիվս այլնի, եղել է ուսումնասիրության շրջանակներում: Այս պահի դրությամբ, նախնական տվյալներով՝ երկու եղբայրներ դուրս են եկել, հետո հանդիպել են հորը, հայրը խեղդելու ճանապարհով սպանել է երեխային»: Նախարարի խոսքով ստացվում է, որ երեխայի սպանությունն այլ վայրում է տեղի ունեցել. «Երբ մենք սկսել ենք փրկարարական աշխատանքներն ամբողջ հարակից տարածքով, իրականացվել է տարածքի սանրում, յուրաքանչյուր հաջորդ տարածքի անցնելու պարագայում, ըստ հոր նախնական ցուցմունքի, նա երեխայի մարմնի տեղափոխում է իրականացրել»:

Զարմանալի է, թե ինչպես է հայրը, երեխայի մարմինը գրկած, հասել հարեւան Ձիլ գյուղի ցուցանակի մոտ, մանավանդ եթե, ինչպես պնդում է նախարարը, ընտանիքի հնարավոր մեղավորության վարկածը մինչ այդ եղել է, եւ բոլոր անդամների անցուդարձն իրավապահների հսկողության տակ պետք է լիներ:

Տիգրանի՝ աուտիզմով տառապող 5 տարեկան եղբայրը, որի հետ նա հոկտեմբերի 27-ին գնացել է խաղալու ու չի վերադարձել, չի կարողացել պատասխանել իրավապահների հարցերին: Բայց լոգոպեդի հետ աշխատանքի ժամանակ նա ձեռքը կոկորդին է դրել: Այս տեղեկությունը հոկտեմբերի 30-ին հանրությունը ստացավ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանից: Սրանից կարելի էր ենթադրել, որ երեխային կամ խեղդել են, կամ նա խեղդվել է լճում: Սեւանում, որը հեռու է գյուղից, եւս որոնողական աշխատանքներ են իրականացվել: Մի կասկածելի, խիստ տարօրինակ հանգամանք եւս՝ Տիգրանի մայրը գյուղ եկած լրագրողներին հանգիստ, անդրդվելի, նույնիսկ անտարբեր ձայնով հարցազրույց է տվել, ասելով. «Չգիտեմ ես, թե ուր գնացած կլիներ էդ երեխեն»: Պատմում է, որ Տիգրանին եղբայրն է տարել մանկապարտեզ, իսկ նրան խնամում էր տալը: Մորը լսելուց հետո սոցցանցերում մարդիկ գրում էին, որ այս կինը գիտի, թե ինչ է կատարվել իր երեխայի հետ, բայց չի ասում: Ո՞րն է սպանության դրդապատճառը: Ի՞նչ մեղք էր գործել 3 տարեկան երեխան հոր առաջ:

Երեխայի հայրն իր ցուցմունքներում նշել է, որ ներընտանեկան վեճ է ունեցել, չի հավատացել, որ երեխան իրենից է: Ծափաթաղի բնակիչները մանրամասներ են պատմում: «Երկու եղբայրը եւ քույրը ժառանգաբար հիվանդ են եղել, նրանց երեխաները նույնպես հիվանդություններ ունեն, բայց ոչ ոք էդ երեխաներին չի բուժել»,- ասում է իմ զրուցակիցներից մեկը: Մյուսը, որը Ճամբարակում տաքսի է վարում, պատմում է, որ ընտանիքն աղքատ էր, բայց Օհանեզովների տանիքի տակ շատ երեխաներ կային: «Դա տուն չի, տան նման մի բան է: Իրենք 5 երեխա ունեն, մնացած 4-ը իրենց երեխաները չեն, Արմենի քրոջ երեխաներն են: Հիմա գյուղերում շատ վատ բաներ են կատարվում, որի վրա ոչ ոք էլ ուշադրություն չի դարձնում: Մարդն ինչ վիճակի լինի, որ 3 տարեկան իր տղային սպանի»,- ասում է տաքսիստը:

Օհանեզովների սոցիալական վիճակի մասին Ծափաթաղի բնակիչները հակասական կարծիք են հայտնում: Մի մասը պնդում է, թե «լավ էլ ապրում են»: Տիգրանի մայրն աշխատում է Թուֆենկյան հյուրանոցում՝ որպես մաքրուհի, անասուն, հավ են պահում, գյուղում նրանցից ավելի վատ ապրողներ կան: «Նրանք փակ են, մյուսների հետ շատ չեն շփվում, ոնց որ կլան լինեին՝ իրենք իրենցով: Երբեմն անասուն են մորթում, միս ենք առնում նրանցից: Նրանք նպաստ են ստանում: Արմենի եղբայրը հաշմանդամ է, նպաստ է ստանում, օգնություններ, սոցիալական աշխատողները նրանց երբեմն այցելում են: Վատ չեն ապրում, իրենցից վատ ապրող էլ կա: Մենք՝ բոլորս, ցնցված ենք, որ նման բան է եղել, բայց այդ մարդիկ ունեն տարօրինակություններ: Նրանց մեջ կա գենետիկական հիվանդություն: Երեխաներն ունեն մտավոր խնդիրներ: Մեծ աղջիկն է, որ նորմալ է: Երբ ամբողջ գյուղը, քունը կորցրած, անգամ դպրոցականները որոնում էին իրենց փոքրին, իրենք անտարբեր նստած էին տան դիմաց, սկի ման էլ չէին գալիս: Մի բան կարող եմ հաստատ ասել՝ ինչ էլ լինի, այդ ընտանիքից երեխաներին պետք է վերցնել, տալ պետական հաստատություն: Նրանց հոգեբանական օգնություն է հիմա պետք»,- ասում է մեր զրուցակից համայնքային ծառայողը: Հարցին, թե ինչ կարող էր եղած լինել, որ հայրը երեխային սպաներ, պատասխանեց. «Ես չգիտեմ, թե ինչ է եղել, հայտնի չէ, թե նման մարդը հոգեկան հուզմունքի պահին ինչի է ընդունակ»:

Մյուսները վստահեցնում են, որ բազմազավակ ընտանիքն ապրում է սարսափելի պայմաններում, որտեղ դժվար է պահպանել հոգեկան առողջությունը, մարդ մնալ, ծայրահեղ աղքատությունից ու հուսահատությունից չկորցնել վերահսկողությունը սեփական վարքի ու կյանքի նկատմամբ: Երեխաները, որոնք գրեթե բոլորն առողջական խնդիրներ ունեն, զուրկ են տարրական ուշադրությունից, կարծես մոլորակից դուրս ապրեն: Նրանց վրա ո՛չ առողջապահական, ո՛չ էլ սոցիալական ծառայությունները ուշադրություն չեն դարձրել:

Ծափաթաղը Ճամբարակ համայնքի մաս է կազմում, փոքր, խուլ գյուղ է, բայց հեռու է եւ Ճամբարակից, եւ Վարդենիսից: Դպրոցը 26 աշակերտ ունի եւ շուտով փակվելու է՝ միանալով հարեւան Ձիլի դպրոցին:



Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՄԱՆԴԱՏ ԵՄ ԾԱԽՈՒՄ՝ ԼԱՎ ՄԱՆԴԱՏ. ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿՐԿԻՆ ՕՐԵՆՔ Է ԽԱԽՏՈՒՄ

Տպավորություն է, որ Նիկոլ Փաշինյանը «կայֆ» է ստանում օրենքներին դեմ գնալուց եւ ամենաչնչին թվացող հարցերում անգամ օրենք է խախտում: Ահավասիկ, սկսվել է իշխող թիմի նախընտրական ցուցակի ձեւավորման գործընթացը: Մի քանի օր առաջ Փաշինյանը հրապարակեց ընթացակարգը, որով պետք է տեղի ունենա 2026 թ. ընտրությունների թեկնածուների ցուցակի ձեւավորումը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության որոշմամբ՝ 2026թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվելու համար թեկնածուները կարող են ինքնառաջադրվել 2025թ. նոյեմբերի 1-ից նոյեմբերի 30-ը ներառյալ: «Ինքնառաջադրումը տեղի է ունենում info@civilcontract.am էլփոստի հասցեին գրված համապատասխան նամակով, որին պետք է կցված լինի ինքնակենսագրական (կենսագրականի հղում): ՔՊ անդամ չհանդիսացող անձինք նամակին պետք է կցեն նաեւ ՔՊ վարչության առնվազն մեկ անդամի երաշխավորության մասին տեղեկատվություն: Թեկնածուների գրանցումն իրականացնելու է ՔՊ վարչությունը՝ 2025թ. դեկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Գրանցված թեկնածուները մինչեւ 2026թ. փետրվարի 5-ը ներառյալ պետք է վճարեն առաջադրման վճար. ՔՊ անդամները՝ 500 հազար դրամ, ՔՊ անդամ չհանդիսացող անձինք՝ 1 միլիոն 500 հազար դրամ»: Ինքը՝ Փաշինյանը, երեկ հրապարակեց իր դիմումը:

Այսինքն, որպեսզի որեւէ մեկն իշխանության պատգամավորության թեկնածու դառնա, պարտավոր է գումար վճարել: Իհարկե, նախկինում էլ ՔՊ թեկնածուները գումար վճարել են, բայց դա եղել է ոչ թե առաջադրման վճար, այն էլ՝ ֆիքսված, այլ՝ «նվիրատվություն նախընտրական հիմնադրամին»: Որպես կանոն, Փաշինյանը բոլոր ընտրություններից առաջ նախընտրական դրամահավաք է կազմակերպում, որի ժամանակ էլ թեկնածուները վճարել են 500 հազարական դրամ, ոչ կուսակցականները՝ 1.5 միլիոն դրամ, եւ բացահայտ չի ասվել, որ փող են տալիս՝ ցուցակում տեղ զբաղեցնելու համար: Նախորդ ընտրություններից հետո անգամ աղմուկ բարձրացավ, երբ հրապարակվեցին դրամահավաքի արդյունքները: Բանն այն է, որ «Կուսակցությունների մասին» օրենքի սահմանմամբ կուսակցությունները գոյատեւում են անդամավճարներով եւ նվիրատվություններով, որեւէ այլ գումարի մասին հիշատակում չկա, այն էլ՝ ֆիքսված չափի:

Իհարկե, դժվար է պատկերացնել, որ իրեն հարգող մտավորականը, արվեստագետը եւ, առհասարակ, իրեն հարգող որեւէ անձ ցանկություն կհայտնի վճարել, որ հայտնվի Փաշինյանի ցուցակում: Ենթադրվում է, որ պետք է հակառակը լիներ՝ Փաշինյանը պետք է խնդրեր, համոզեր, որ փոքր-ինչ հեղինակություն ունեցող մարդկանց բերի իր թիմ եւ ուժեղացնի պառլամենտի կազմը, բայց կարծես որոշել է ձեւականություններից հետեւից չընկնել եւ աճուրդի է դրել ԱԺ պատգամավորի մանդատը, գնացուցակն էլ նախապես հրապարակել:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության փոխնախագահ **Դավիթ Խաժակյանը** խնդրահարույց է համարում իշխող ուժի որդեգրած մոտեցումը: «ՔՊ-ն պահանջում է այն անձանցից, ովքեր վարչության կողմից կհաստատվեն պատգամավորության թեկնածու, պարտադիր կերպով գումար վճարել կուսակցությանը: Սա խնդրահարույց է «Կուսակցությունների մասին» օրենքի իմաստով, քանի որ այն սահմանում է բոլոր այն ֆինանսական մուտքերը, որոնք կարող են լինել կուսակցության հաշվեհամարին: Դրանք հիմնականում անդամավճարներն ու նվիրատվություններն են: Այս գումարները որեւէ կերպ նվիրատվություն համարել հնարավոր չէ, քանի որ դրանք անհատույց չեն՝ նախապայման է թեկնածու լինելու համար: Հետեւաբար կարծում եմ՝ ունենք իրավական խնդրահարույց իրավիճակ: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ այս գումարը թեկնածուի կողմից նախընտրական արշավին իրականացվող ներդրման համար էլ չէ, քանի որ դրա համար կա առանձին կարգավորում Ընտրական օրենսգրքով, երբ թեկնածուն՝ ինքը, այդ գումարը մուտք է անում նախընտրական հիմնադրամ: Տվյալ դեպքում այս գումարները, հավանաբար, պետք է մուտքագրվեն ՔՊ-ի հաշվեհամարին, եւ դա, ըստ էության, թեկնածու դառնալու դիմաց վճարվող գումար է: Եկեք չմոռանանք, որ ՔՊ-ում ընտրական ցուցակը կազմվում է միանձնյա, ուստի անհասկանալի է՝ այն իրավիճակում, երբ անձը կարող է իմանալ իր հերթական համարը եւ հրաժարվել մասնակցել, ինչո՞ւ պետք է նախապես նման վճարում անի, ինչի՞ դիմաց: Սա պետք է արժանանա արդարադատության նախարարության գնահատականին»,- ասաց Խաժակյանը՝ շեշտելով. «Ցանկացած մուտք կուսակցության հաշվեհամարին, որը չի համապատասխանում օրենքի պահանջին, ենթակա է ուղղորդման պետական բյուջե»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՏԱՐԻՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՅՀՈՅԱՆՔՆԵՐ ԷՐ ՇՌԱՅԼՈՒՄ ՆԻԿՈԼԻ ՈՒ ԻՐ ԹԻՄԻ ՄԱՍԻՆ՝ ԵՍ ԿԱՄԱՉԵՄ ԿՐԿՆԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղալյանն** է:*

- Անգամ որոշ ընդդիմադիրներ կարծում էին, թե այս կիրակին Հովհաննավանքում ավելի մարդաշատ ու տպավորիչ կլինի, քան նախորդ կիրակի էր: Եթե հաշվի առնենք, որ Նիկոլ Փաշինյանը հանձնարարել էր, եւ ՔՊ-ն ջանք ու եռանդ չէր խնայել Հովհաննավանքը լցնելու ուղղությամբ, բայց արդյունքում ընդամենը 400-500 մարդ էր հավաքվել, մեծ մասը՝ բարձրաստիճան պաշտոնյաներ: Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է Փաշինյանի հակաեկեղեցական արշավը ձախողումներ արձանագրում:

- Մտածում էին, որ Հովհաննավանքի տարածքը կարող են լցնել՝ վարչական ռեսուրսի կիրառմամբ, բայց քանի որ այն նաեւ գյուղական բնակավայր է, բնակչության հիմնական մասը հարգում եւ շատ բարձր է գնահատում Տեր Սարգիս քահանա Սարգսյանին, որի տարեդարձն է այսօր: Նա շատ սիրված քահանա է, Ապարանի եկեղեցում էր ծառայում, այժմ՝ Հովհաննավանքում: Ստեփան Ասատրյանին աջակցում է գյուղի մի չնչին հատվածը, սա է նաեւ պատճառը, որ մարդիկ խուսափեցին գնալ Հովհաննավանք: Իշխանությունը մտածում էր, որ վարչական ռեսուրսով, տարբեր տեղերից մարդկանց բերելով՝ կարող է հաջողության հասնել, բայց շնորհիվ լրագրողների՝ բացահայտվել են այն մարդկանց դեմքերը, ովքեր վերջին 6-7 տարիներին մասնակցում են նմանաբնույթ ակցիաների: Մշտապես նույն ագրեսիվ դեմքերը, նույն անադեկվատ կեցվածքը, նույն բառապաշարը: Անգամ եկեղեցու տարածքում իրենց չեն կարողանում դրսեւորել: Մեկը սեռական բնույթի հայհոյանքներ էր տալիս, մեկը սիգարետ էր ծխում, մյուսն արեւածաղիկ էր ուտում, մյուսը բղավում ու անիծում էր: Այնտեղ տեսանք նաեւ հայտնի մարզպետներին, քաղաքապետերին: Ես ֆիքսեցի նաեւ Բյուրականի համայնքապետարանի կոմունալ բաժնի աշխատակիցներին, որոնք զբաղվում են աղբահանության հարցերով: Հավանաբար, համայնքապետարանն էր պարտադրել այդ մարդկանց՝ ներկա գտնվել: Մի խոսքով, ահռելի վարչական ռեսուրս էր կիրառվել, սակայն մարդկանց թիվը չէր ավելացել: Տեսանք նաեւ գազելներից իջնող մարդկանց, ովքեր խուսափում էին լրագրողների հետ զրույցներից, որովհետեւ ասվել էր իրենց, որ ոչ մի պարագայում չխոսեն, բերաններից ավելորդ բան չթռցնեն: Ենթադրում եմ, որ հենց այս ձախողումը ստիպեց՝ հաջորդ հավաքն անցկացնել Թալինում, քանի որ այն քաղաքային բնակավայր է, եկեղեցին ավելի փոքր է՝ տարածքով, մտածում են՝ գոնե վարչական ռեսուրսի կիրառմամբ Թալինի եկեղեցին կարող են լցնել: Էլի դպրոցներից, համայնքապետարաններից պարտադրանքով մարդկանց կբերեն, տպավորություն կստեղծեն, որ աջակիցների մի մեծ խումբ ունեն: Ամենացավալին այն է, որ եկեղեցու բակում հայտնված այդ մարդկանցից եւ ոչ մեկը չկարողացավ իրեն ճիշտ դրսեւորել: Ոչ մի կին գլխաշոր չէր կրում, ոչ մի տղամարդ իրեն հավատացյալի պես չէր պահում: Նույնիսկ չգիտեին, թե ինչ տոն է, ինչ խորհուրդ ունի տոնը: Այդ մարդիկ երբեւէ ոչ եկեղեցի էին գնացել, ոչ պատարագի: Հովհաննավանքի կյանքին մշտապես եղել են անհաղորդ ու հիմա վերադասի պարտադրանքով միայն հայտնվում են այնտեղ: Մի մասը հերյուրանքներ է տարածում, մի մասը՝ չարություն: Ստեփանի անպատասխանատու հայտարարությունը լսեցի, ասում է՝ դե, մենք չունենք մեր խոսքերի հիմնավորումը, բայց թող կաթողիկոսը մեզ դատի տա: Այսինքն՝ իր նման բոլորը կարող են ավել-պակաս ինչ-որ բաներ խոսել եւ անցնել առաջ, բայց չէ՞ որ ասողը՝ ինքը, պարտավոր է իր ասածներն ապացուցել: Նա հստակ կերպով զրպարտիչ է: Նույնիսկ եկեղեցիներ օծելու մասին խոսեց ու այնպիսի ստեր ասաց, որ ուղղակի իրականության հետ ոչ մի աղերս չունեն: Իմ ժամանակ երբ Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցին վերաօծվեց, այն կատարվեց զրո դրամով: Չկա մեկը, որ կարող է ասել, թե հարյուր դրամ է ինձ տվել՝ եկեղեցին վերաօծելու ժամանակ: Ասեմ ավելին՝ սրբազան հորը, վերաօծումից հետո, խնդրեցի մեզ հետ ճաշի մասնակցել, սակայն նա նույնիսկ ճաշին չմասնակցեց: Մենք՝ գյուղացիներով ենք ճաշին մասնակցել: Այդքանից հետո ոնց կարելի է նման անլուրջ ու անպատասխանատու հայտարարություններ անել: Այդ մարդը՝ Ստեփանը, լուրջ չէ, ավելորդ է անգամ այդ անլուրջ մարդու մասին խոսելը: Տեր Սարգիսը եղել է իմ համակուրսեցին: Միասին ենք սովորել 1995-1998 թվականներին: Ասում է՝ Տեր Սարգիսը «խադավիկ» է եղել, բայց քանի որ կաթողիկոսի բարեկամն է, քահանա են ձեռնադրել: Այ անգրագետ, ոնց կարելի է առանց ամոթի զգացման նման ստեր արտաբերել: Տեր Սարգիսը դեռ շատ վաղուց ավարտել է Մանկավարժականի պատմության ֆակուլտետը եւ երկար ժամանակ Արագած եւ Ծաղկունք գյուղերի դպրոցներում պատմություն է դասավանդել: Նա հիմա ոնց դարձավ «խադավիկ», թեպետ ով ասաց, որ «խադավիկ» աշխատելն ամոթ է: «Խադավիկությունը» նորմալ մասնագիտություն է, հարյուրավոր «խադավիկներ» Ստեփան Ասատրյանից անհամեմատ բարոյական են, թեպետ նրանց ձեռքերը յուղոտ են, սակայն հոգին մաքուր է, խիղճը մաքուր է, ի տարբերություն իրեն: Ժամանակին նա Արայիկ Հարությունյանին «Սորոսի բիճ» էր ասում, իսկ Նիկոլին՝ «ոչխար», վերջին հայհոյանքներն էր տալիս, հիմա դարձել է իշխանակամ: Մենք, ի տարբերություն իրեն, երբեք ոչ մեկին, անգամ Նիկոլին չենք հայհոյել: Այժմ ինքը մոռացել է իր հայհոյանքները եւ անամոթաբար մեզ վրա գործ է տալիս: Տարիներ շարունակ այնպիսի սեռական բնույթի խոսքեր էր շռայլում Նիկոլի ու իր թիմի մասին, որ ես հիմա կամաչեմ անգամ դրանք կրկնել:

- Թալինի քահանա Տեր Թադեն եւս աջակցում է Նիկոլ Փաշինյանին: Ինչ եք կարծում՝ ինչո՞ւ նրան կարգալույծ չեն հռչակում Եկեղեցու դեմ արշավ հայտարարած Փաշինյանի կողմն անցնելու համար:

- Ժամանակատար երեւույթ է դա: Կաթողիկոսը մենակ չէ այդ որոշումները կայացնում: Կա կարգապահական հանձնախումբ՝ տարբեր անդամներից բաղկացած: Պետք է հարցը ներկայացվի, եւ դրանից հետո քննվի այն: Այնպես չէ, որ Վեհափառը միայնակ է որոշում այդ հարցերը: Ստեփան Ասատրյանը մեծ խնդիրներ ուներ, եկեղեցականներս պարզապես շատ բաների մասին չենք ուզում բարձրաձայնել, սակայն նա միշտ էլ աչքի է ընկել իր վատ տեսակով, շողոքորթությամբ, քծնանքով, ստախոսությամբ: Այնպիսի հայհոյալից բերան ունի, որ ես բազմիցս վատ եմ զգացել այդ խոսքերը լսելով եւ թողել հեռացել եմ տվյալ միջավայրից, որպեսզի այդ խոսքերը չլսեմ: Անձամբ եմ լսել, թե ոնց է Նիկոլի հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ տալիս: Ինձ մոտ տպավորություն է, որ նրա վրա ունեն կոմպրոմատներ եւ շանտաժի միջոցով դարձրել են իրենց ձեռքի գործիքը: Վախենում եմ, որ Նիկոլը մի օր նրան ֆիզիկական վնաս տա ու մեղքը բարդի Եկեղեցու վրա:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷԿՈՊԱՐԵԿՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ՄԻԱՅՆ ԱՆՏԱՌԻ ՄԱՍՆԱԳԵՏ

Ցանկացած բնագավառի կառավարման արդյունավետության համար կարեւոր է, որ ոլորտը ղեկավարողները մասնագիտական կրթություն ունենան: Ծրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության ղեկավարները կրթությամբ անտառագետ, բնապահպան չեն:

Հոկտեմբերի 16-ին շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետ Վլադիմիր Կիրակոսյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Դուք, էկոպարեկային ծառայության շատ պաշտոնյաներ չունեք բնապահպանական, անտառագիտական կրթություն, այդ հանգամանքը չի՞ խանգարում էկոպարեկային ծառայության աշխատանքի արդյունավետությանը»:

Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանը պատասխանել է հարցին. «Հայտնում եմ, որ էկոպարեկային ծառայության պետի եւ նրա տեղակալների պաշտոնները համարվում են վարչական պաշտոններ: «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական պաշտոնը հանրային իշխանության պաշտոններում նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը եւ պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների եւ խնդիրների իրականացման համար: «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի համաձայն. «6. Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են տվյալ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովող գործառույթներ: 7. Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են այն գործառույթները, որոնք նպաստում եւ աջակցում են հիմնական մասնագիտական ստորաբաժանումների գործառույթների իրականացմանը: «Էկոպարեկային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղարը եւ կենտրոնական մարմնի հիմնական աջակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ, եւ վերջիններիս աշխատանքային հարաբերությունները, ինչպես նաեւ ծառայությունում պաշտոնների նշանակվելու պայմանները, ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության եւ աշխատանքային ստաժի չափանիշները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ծառայության պետի տեղակալներից մեկին շնորհված է «Ճարտարագետ-անտառագետ»-ի բակալավրի աստիճան՝ «Անտառային ճարտարագիտական գործ» մասնագիտությամբ, եւ «Անտառագետի» մագիստրոսի աստիճան՝ «Անտառ-անտառպարտեզպուրակային տնտեսություն» մասնագիտությամբ»: Ղեկավար պաշտոնների նշանակելու գործը, փաստորեն, օրենքով կարգին է, սակայն էկոպարեկային ծառայության աշխատանքում առկա բազում խնդիրները նաեւ այդ ծառայության ղեկավարների ոչ մասնագետ լինելու հետեւանք են:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Սլաքավարներին բռնեցին, հրամանատարը՝ ոչ

Մի քանի օր առաջ գրել էինք, որ ԱԱԾ-ն քննչական գործողություն է անցկացրել քիմիկների զորամասում: Իրավապահ մարմինների մեր աղբյուրները հայտնեցին, որ ձերբակալվել, այնուհետեւ գրավի դիմաց ազատ է արձակվել զորամասի 3 զինծառայող, որոնք ընդունել են իրենց մեղքը: Նրանք զորամասի վառելիքի յուրացմամբ են զբաղվել: Մեր աղբյուրները հայտնում են նաեւ, որ գիշերվա 2-3-ի կողմը առանց հրամանատարի թույլտվության որեւէ մեկը, այն էլ՝ քաղաքացիական մեքենայով, չէր կարող մտնել զորամասի տարածք: Այսինքն, հրամանատարին եւս պետք է մեղադրանք առաջադրվեր: Նշենք նաեւ, որ բոլոր 3 զինծառայողն էլ եղել են զորամասում հրամանատարի «լյուբիմչիկները»: Ըստ նախնական եւ դեռեւս ճշտման ենթակա տեղեկությունների, վերջիններս իրենց սեւ գործին ներգրավել են նաեւ ժամկետային զինծառայողների: ՊՆ մեր աղբյուրները հայտնեցին, որ այս գործը նախարարի եւ ԳՇ պետի հսկողության ներքո է. առաջիկայում հետեւելու են պաշտոններից ազատումներ եւ այլ պատիժներ:

ԵՐԱԶՇՏՈՒՄ

Այսպես կոչված, վարչապետ Փաշինյանի եւ, այսպես կոչված, քահանա Ստեփանի կատարմամբ երկրորդ պիղծ պատարագն էլ անցավ պատմության գիրկը: Առջեւում երրորդն է, այս անգամ՝ Թալինում, որտեղ, այսպես կոչված, վարչապետ եւ, այսպես կոչված, ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար Փաշինյանը պատրաստվում է նոր պիղծ պատարագ հրահրել եւ, ինչպես ինքն է ասում, աղոթել 44-օրյա պատերազմում ընկած մեր զավակների հոգու հանգստության համար:

Ի՞նչ եմ նկատում... Նկատում եմ, որ ժողովրդական խոսքը, թե ախորժակն ուտելիս է բացվում, ճիշտ է: Հովհաննավանք գնաց, առաջին անգամ գծերն ստուգեց, ապա երկրորդ պիղծ պատարագին մասնակցեց ու տեսավ, որ՝ չէ, մեր ժողովուրդն այնքան էլ մոլեռանդ չէ իր քրիստոնեական հավատի հարցում: Իսկ ինչո՞ւ չմասնակցել երրորդ պիղծ պատարագին, ինչո՞ւ այդ պատարագի հիմքում չդնել ավելի զգայուն թեմա՝ պատերազմի զոհերի հիշատակի համար իբր աղոթելը: Մեկ էլ տեսար՝ աշխատեց: Ի՞նչ է պատահել, վերջապես... Աննան, սա ցավով եմ ասում, մի քանի սեւազգեստ ընկերուհի ունի, կգցի հետեւից, կտանի Թալինի Սբ Աստվածածին եկեղեցի, համբուրել կտա Տեր Թադեւ Թախմազյանի առաջ պարզած խաչը, եւ թերթերը կգրեն՝ տեսա՞ք, թե «մեր վարչապետն» ինչքան է սիրում պատերազմի զոհերին ու նրանց ծնողներին... Եվ ոչ ոք գուցե չհարցնի էլ՝ Աննայի սեւազգեստ ընկերուհիներն էլ ուրիշ մեկի հետ չէի՞ն կարող գնալ պատարագի, որ իրենց որդիների գլուխը կերած այս, այսպես կոչված, գերագույն գլխավոր հրամանատարի հետ գնացին պատարագի:

Ֆեյսբուքի իմ անձնական էջում Փաշինյանին մի կարճ նամակ եմ գրել. «Չփորձես այդպիսի բան անել, խորհուրդ չեմ տալիս...»: Կլսի, չի լսի՝ չգիտեմ: Ավելի շատ, սակայն, հակված եմ մտածելու, որ չի լսի: Չորագլխի մեկն է, որ սեւեռվում է մի բանի վրա, ուրեմն մեռնի էլ, պիտի հասնի իր ուզածին: Իսկ թե ինչ է ուզում անել եւ ինչի հասնել պիղծ պատարագների այս շարքով, առայժմ միայն իրեն եւ սատանային է հայտնի: Մինչդեռ ինձ՝ հասարակ մահկանացուիս թվում է, որ ՀՀ, այսպես կոչված, վարչապետը շարունակում է իրականացնել հայ ժողովրդին իր հավատից գցելու, հեռացնելու, նրանից ամորֆ զանգված ստանալու ծրագիրը, որ հաստատ ինքը չի մտածել: Նա այդքան խելք չունի: Ասել են՝ անում է: Ուկրաինայում էլ նույնը տեղի ունեցավ՝ պառակտեցին Ռուս ուղղափառ եկեղեցին, պառակտվեց ժողովուրդը, որ կոչվում էր ուկրաինացի, եւ այսօր ուկրաինացիները կռվում են միմյանց դեմ՝ «մինչեւ վերջին ուկրաինացին» վճռականությամբ: Ո՞վ ավելի լավ կքանդեր Ուկրաինայի նման հզոր երկիրը, եթե ոչ հենց այդ երկրի դրածո իշխանությունը: Եվ դրսի ուժերը հասան իրենց նպատակին: Սա էլ նույն բանն անում է այստեղ՝ Հայաստանում թե՛ ազգաբնակչությամբ եւ թե՛ կրոնական ուղղվածությամբ գրեթե միատարր մեր երկրում:

Ուշադրություն դարձրեք նաեւ այս հարցում, այսպես կոչված, վարչապետի դրսեւորած համառությանը, որին կնախանձեր անգամ հայտնի չորքոտանին: Տեսեք՝ ուր է հասել... Հայ առաքելական սուրբ եկեղեցին, որ դարեր շարունակ իր սուրբ պատարագներում անընդհատ խնկարկել է մեր ազգի արժանավոր զավակների պայծառ հիշատակը, պղծվում է մի ինքնահռչակ (դրսից նշանակված) անհավատի ձեռքով, պղծվում է աստիճանաբար, պղծվում է վանք առ վանք, եկեղեցի առ եկեղեցի, մատուռ առ մատուռ: Այսօր դեռ Արագածոտնում է, վաղը կանցնի Արմավիր, Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք... Եվ սա է այն գինը, որ նա վճարում է իր դրսի տերերին՝ 2026-ին պաշտոնում մնալու համար: Մեծ թուրանական ճանապարհին Հայաստան չպետք է լինի, եւ վերջ:



Բայց ի՞նչ անենք, սա է մեր ժողովուրդը, հավատում է, այսպես կոչված, այս կառավարության խոստումներին՝ խաղաղություն ենք բերել, ինքնիշխանություն, ազատություն... Մի հարցնող լինի՝ Եկեղեցի՞ն ինչով էր խանգարում խաղաղությանը, որ սկսեցիք քանդել: Ու կպարզվի, որ սրանց նպատակը ոչ թե խաղաղությունն է, ինքնիշխանությունն ու ազատությունը, այլ Հայաստանը որպես պետություն քանդելը եւ հայ ժողովրդին հերթական անգամ աշխարհով մեկ ցրելը: Օրերս այսպես կոչվածը աթաթուրքի ցիլոյից էր դրել գլխին ու զվռնում էր Երեւանում: Երեւի հաջորդիվ էլ պիղծ պատարագ կանի Հայոց ցեղասպանության սրբադասված զոհերի հիշատակին: Ո՞վ է ձեռքը բռնելու... Ինքն ամոթ չունի... Կա այդպիսի պրոյեկտ՝ հիմնովին քանդել Հայաստանը: Նա անցել է գործի:

ՄԵՆՔ ՔՆԱԾ՝ ՆԱ ԱՆՑԵԼ Է ԳՈՐԾԻ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԱՑԵԼ Է ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՈՒ ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐԻ ՀՈՒՅՍԻՆ

Խորհրդարանական ընտրություններից ընդամենը յոթ ամիս առաջ Նիկոլ Փաշինյանը փորձում է սարսափ ու վախ ներշնչել հասարակությանը, իր քաղաքական ընդդիմախոսներին, նրանց ցուցադրելով իր ունեցած զենքն ու զինամթերքը, ինչպես նաեւ՝ դրանք կիրառելու պատրաստ ուժերը: Նոյեմբերի 1-ին նա ներկա գտնվեց ոստիկանության գվարդիայի գործարկման արարողությանը: Սկզբնապես նախատեսվում էր, որ այս կազմավորումը կոչվելու է Ազգային գվարդիա, բայց Հայաստանում ոչինչ չի կարող ազգային լինել, առավել եւս՝ ոտիկանության ստորաբաժանումը: Մանավանդ որ այդ ստորաբաժանումն ուղղված է լինելու ազգի դեմ. ինչպե՞ս կարող է ազգային գվարդիան զենք կամ ուժ կիրառել ազգի դեմ, տրամաբանորեն՝ այն ազգին պաշտպանելու համար է: Մինչդեռ «ոստիկանական գվարդիա» անվանումը նշանակում է, որ այն ունի այլ նշանակություն՝ ոստիկանական՝ պատժիչ, ուղղված է լինելու Փաշինյանի քաղաքական հակառակորդների դեմ:

«Մեր խնդիրը պետությանը քաղաքացուց պաշտպանելը չէ, մեր խնդիրը քաղաքացուն պետությունից պաշտպանելն էլ չէ, մեր իրական խնդիրը քաղաքացուն պաշտպանելն է պետության միջոցով»,- ոստիկանական գվարդիայի գործարկման արարողության ժամանակ ասում է ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը: Հայտնի չէ միայն, թե այդ ումից է քաղաքացուն պաշտպանելու ոստիկանության գվարդիան: Մինչդեռ Փաշինյանն իր ելույթում հերքում է նախարարի պնդումը եւ տրամագծորեն հակառակն է ասում՝ ամբողջովին բացահայտելով այս կառույցի ստեղծման եւ գործունեության նպատակը. «Քաղաքացիների համար պետք է թափանցիկ լինի՝ որ դեպքում եւ ինչ պայմաններում ոստիկանությունն ու ոստիկանության գվարդիան կարող են ուժ կիրառել, ոստիկանության ծառայողի համար էլ պետք է թափանցիկ լինի, նա պետք է իմանա՝ որն է ուժի կիրառման իրադրությունը»:

Այնուամենայնիվ, ոստիկանության գվարդիան ստեղծված է քաղաքացու դեմ ուժ կիրառելու համար, եւ դրա մասին պետք է իմանա ինչպես քաղաքացին, այնպես էլ ոստիկանության գվարդիայի ծառայողները: Իսկ ո՞րն է այն սահմանը, որից հետո ոստիկանական գվարդիան պետք է ուժ կիրառի, երբ քաղաքացիները, հասարակությունը սպառնում են Փաշինյանի իշխանությանը, եթե իշխանության համար սպառնալիք չկա, ուժի կիրառման անհրաժեշտություն էլ չկա: Ցուցադրվող կադրերում Փաշինյանը ներքին գործերի նախարարի ուղեկցությամբ ծանոթանում է ոստիկանական գվարդիայի տեխնիկական միջոցներին, նոր սպառազինությանը՝ արտասահմանյան արտադրության ավտոմատներ, ատրճանակներ, մահակներ, վահաններ, զրահաբաճկոններ, դիմակներ. ո՞ւմ դեմ է ուղղված այդ սպառազինությունը, ումի՞ց են պաշտպանում քաղաքացուն: Կա համայնքային ոստիկանություն, որը լուծում է համայնքային նշանակության խնդիրներ, զբաղվում է մանր հանցագործությունների կանխարգելմամբ, դրանց դեմ պայքարով, կա քրեական ոստիկանություն, որը զբաղվում է ավելի բարդ քրեական գործերի դեմ պայքարով, իսկ ինչո՞վ է զբաղվելու ոստիկանական գվարդիան: Ոստիկանության այս հատուկ ստորաբաժանման նպատակը իշխանությանը եւ իշխանավորներին պաշտպանելն է:

Փաշինյանը հասարակությանը ցույց է տալիս, թե՝ տեսեք, ինչպիսի նոր եւ ժամանակակից սպառազինություն ենք ձեռք բերել ձեր դեմ, այդ սպառազինությունը գնվել է մեր արեւմտյան հովանավորների աջակցությամբ, ինչը նշանակում է, որ նրանք մեզ լիարժեք թույլտվություն եւ հավանություն են տալիս՝ այդ զենքը ձեր դեմ ուղղելու համար: Դուք պետք է իմանաք, որ մեր դեմ, մեր իշխանության դեմ հանդես գալու դեպքում այս ամբողջ զենքն ու զինամթերքը, տեխնիկական միջոցները կիրառվելու են ձեր դեմ: Գուցե նա դրանով նաեւ իր անհանգիստ միտքն է հանգստացնում, որ ամեն վայրկյան մտածում է իշխանության կորստի եւ դրա հնարավոր հետեւանքների մասին:

Մի՞թե պարզ չէ, որ չի կարող հավասարություն լինել, եթե կողմերից մեկը՝ իշխանությունը, զինված է, իսկ մյուս կողմը՝ հասարակությունը, ընդդիմությունը՝ անզեն: Որտե՞ղ եք տեսել, որ զինված ու անզեն մարդու միջեւ մրցակցություն լինի, իսկ մեր դեպքում այդ մրցակցությունը վերածվել է հակամարտության: Ինչ-որ մեկն ասել է, որ հրացանն իշխանություն է ծնում: Փաշինյանը, ցուցադրելով այդ զենքերը, նկարվելով այդ զենքի ու դա կիրառողների ֆոնին, ուզում է ասել՝ ահա, տեսեք իմ ու ձեր տարբերությունը, տեսեք իմ ուժը, իմ իշխանության աղբյուրը:

Բայց սեղաններին շարված ավտոմատներն ու ատրճանակներն իրենք իրենց չեն կրակում, դրանք գործի են դնում մարդիկ, արդյո՞ք այդ մարդիկ պատրաստ են մի մարդու իշխանությունը պահելու համար վերածվել մարդասպանների, թեկուզեւ՝ վարձու մարդասպանների:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

ԲԱՐԵՓՈԽԻՉՆԵՐԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԻՆ, ԱՎԱՆԴԱՊԱՀՆԵՐԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒ

2003 թ. նոյեմբերի «վարդերի» հեղափոխության հաղթանակից հետո նախագահ Միխայիլ Սահակաշվիլին ընթացավ Վրաստանն արեւմտյան եւ եվրոպական արժեքներին կողմնորոշված պետություն դարձնելու ճանապարհով: Նա ձեռնարկեց կոռուպցիոն համակարգն ապամոնտաժելուն, երկիրը ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանն ինտեգրելուն նպատակաուղղված քայլեր՝ զուգահեռաբար նվազեցնելով Ռուսաստանի ազդեցությունը: Սակայն շուտով բախվեց քաղաքական կատեգորիաներից դուրս գործող գրեթե 2000-ամյա Վրաստանի առաքելական ավտոկեֆալ ուղղափառ եկեղեցու դիմադրությանը:

ԽՍՀՄ փլուզումից հետո եղավ մի շրջան, երբ տնտեսական կյանքը, անվտանգային իրավիճակը, հասարակական կարգը Վրաստանում դուրս էին եկել վերահսկողությունից, գրեթե չէին գործում իշխանության մարմինները: Այդ ժամանակ երկրում միակ հավաստի ինստիտուտը Վրաց եկեղեցին էր: Կրոնական իշխանություն լինելուց զատ, նա դարեր շարունակ եղել է ազգի ինքնության, ոգու, հիշողության պահապանը, աշխարհիկ տերերի նեցուկն ու զինակիցը: Ազգին ու պետությանը մատուցած այդ ծառայությամբ Եկեղեցին իրեն համարում էր ուժեղ ու տեր, եւ երբ երիտասարդ ու հավակնոտ Սահակաշվիլու իշխանությունը ցանկացավ արագ վերափոխել երկիրը՝ հրաժարվելով ավանդական մշակութային եւ բարոյական համակարգերից, Եկեղեցին չցանկացավ կանգնել նրա կողքին:

Իշխանություն-եկեղեցի հարաբերություններում բոլոր սրացումներն այս կամ այն կերպ առնչվում են Վրաստանի ներքին կյանքին Արեւմուտքի միջամտությանը: Կառավարությունը խորացնում էր կապերն ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ, մինչդեռ պատրիարք Իլյա Բ-ն հանդես էր գալիս հօգուտ բոլոր հարեւանների, այդ թվում՝ Ռուսաստանի հետ ավանդական կապերի պահպանման: ՌԴ-ի հարցում պատրիարքի վերաբերմունքը պատահական չէ. 1811-1917 թվականներին Վրաց եկեղեցին գտնվել է Ռուսական եկեղեցու ենթակայության ներքո (ի դեպ, մինչեւ 609 թիվն էլ Հայոց եկեղեցու կազմում էր), կանոնական կապեր ունի Ռուսական եկեղեցու հետ, ինչպեսեւ Ուղղափառության համաշխարհային ընտանիքի լիիրավ անդամ է:

Սահակաշվիլին շատ շուտ հասկացավ, որ Վրաստանը վերափոխելու գործում կամ պետք է ստանա Եկեղեցու «օրհնությունը», կամ պետք է սահմանափակի նրա ազդեցությունը: Նա երկուսն էլ փորձեց: Սկզբում խոնարհաբար այցելում էր վանքեր, Եկեղեցուն վերաբերվում որդիական պատկառանքով, ըստ արժանվույն գնահատում Եկեղեցու ավանդը ժողովրդի հոգեւոր կյանքում, մշակութային ժառանգության ստեղծման եւ պահպանման հարցերում: Բայց երբ նրա բարեփոխումները մոտեցան լուսավորության, մշակույթի, բարոյական դաստիարակության ոլորտներին, որտեղ Եկեղեցին ուժեղ դիրքերում էր, Եկեղեցու հետ հարաբերությունները լարվեցին:

Եկեղեցին ազատական բարեփոխումները գնահատեց որպես սպառնալիք ազգային ինքնությանը:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱՐ 1-ԻՆ

2004-2005-ին Վրաստանի կառավարությունը փորձեց վերահսկողություն սահմանել Եկեղեցու ունեցվածքի վրա եւ հստակեցնել ֆինանսական արտոնությունները: Զուտ տնտեսական կարգավորումներ մտցնելու կառավարության փորձը Եկեղեցին ընկալեց որպես միջամտություն հոգեւոր ոլորտին: Տեւական վերբալ դիմակայությունը հանգուցալուծվեց համաձայնագրի ստորագրումով, որով Եկեղեցուն տրվեց հատուկ սահմանադրական կարգավիճակ եւ պետական ֆինանսավորում:

Սահակաշվիլին դրսեւորեց ճկունություն եւ նահանջեց:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱՐ 2-ՐԴ

2007 թվականին կրթության նախարարությունն առաջադրեց օրենսդրական փաթեթ, որը թուլացնում էր Եկեղեցու ազդեցությունը դպրոցում: Գլխավոր կետերն էին՝ դպրոցն աշխարհիկ տարածք է, հետեւաբար՝ կրոնի դասավանդումը դպրոցում ոչ պարտադիր առարկա է, եւ հոգեւորականը չի կարող ներգրավվել կրթական ծրագրերում որպես ուսուցիչ, կրոնին եւ Եկեղեցուն առնչակցվող հարցերը աշակերտներին հարկ է մատուցել ոչ թե դավանաբանական, այլ մշակութաբանական տեսանկյունից: Եկեղեցին այս նորամուծություններն ընկալեց որպես նոր սերնդին քրիստոնեական ինքնությունից զրկելու փորձ, եւ հոգեւորականներն ու հավատացյալները դուրս եկան փողոց: Այս անգամ դիմակայությունն ավարտվեց փոխզիջումով. դպրոցը պաշտոնապես մնաց աշխարհիկ, պետության անունից կրոնի ուսուցումը վերացվեց, բայց մշակույթի դասաժամերի ընթացքում թույլատրվեց առանց քարոզչության ներկայացնել քրիստոնեական ժառանգությունը: Շատ դպրոցներում պահպանվեց քահանաների «մեղմ» ներկայությունը՝ որպես «դաստիարակչական երկխոսության» մասնակից, սակայն ոչ որպես ուսուցիչ: Թեեւ վերացավ լարվածության օջախը, եւ կասեցվեց Եկեղեցու՝ 1990-ական թվականներից եկող անսահմանափակ ներգործությունը, սակայն Եկեղեցին ցույց տվեց, որ ունակ է սահմանափակելու բարեփոխումները, եթե դրանք անցանկալի են ազգային ինքնության առումով:

Սահակաշվիլին եւ Եկեղեցին կնքեցին փոխզիջումային գործարք:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱՐ 3-ՐԴ

2008 թ. ռուս-վրացական 5-օրյա պատերազմը բացահայտեց իշխանություն-եկեղեցի ներհակության նոր ծալքեր: Սահակաշվիլին Ռուսաստանը հռչակեց բռնազավթիչ եւ թշնամի: Պատրիարքը թեեւ դատապարտեց ռուսական ներխուժումը, սակայն մերժեց խզել կապերը Մոսկվայի պատրիարքության հետ: Պատերազմի նկատմամբ վերաբերմունքի հարցում մոտեցումների երկփեղկվածությունը մնաց իբրեւ բաց վերք եւ ամեն առիթով բորբոքվում էր նոր ուժով: Պատերազմի հաջորդ տարում «Մաեստրո» հեռուստաընկերության եթերում պատրիարքը բառացի հայտարարեց. «2008 թվականի օգոստոսի պատերազմից կարելի էր խուսափել», եւ հորդորեց նախագահին՝ գլխով չհարվածել պատին, «ի վերջո, պատը կարելի է շրջանցել կամ դրա մեջ դուռ գտնել»: Հոգեւոր առաջնորդի խոսքն առաջացրեց ընդդիմության հիացմունքը եւ իշխող կուսակցության անթաքույց դժգոհությունը:

Սահակաշվիլին եւ պատրիարքը մնացին հակադիր դիրքերում:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱՐ 4-ՐԴ

2011-ին խորհրդարանը հավանություն տվեց «ԵՄ անդամ երկրներում որպես օրինական կրոն ճանաչված դավանանքներին» որպես լիիրավ կրոնական կազմակերպություն (իրավաբանական անձի կարգավիճակով) գրանցելու մասին օրինագծին: Ի դեպ, դրանք գործում էին որպես բարեգործական կազմակերպություններ կամ ոչ կառավարական ՀԿ-ներ, մինչդեռ Վրաց եկեղեցին առանձնաշնորհյալ դիրքում էր, հատկացումներ էր ստանում պետական բյուջեից, օգտվում հարկային արտոնություններից: Թեեւ պատրիարքը de jure օժտված չէ իշխանական որեւէ լիազորությամբ, սակայն de facto ունի «ազգի հորն» արժանի հեղինակություն: Գոռոզամտությունը խանգարեց իշխանությանը՝ հաշվարկելու իր քայլի հետեւանքները՝ ելնելով հասարակության մեջ Եկեղեցու եւ նրա առաջնորդի բարոյական ազդեցության փաստից, հասկանալու, որ Եկեղեցին եւ պետությունը դեռեւս լիովին բաժանված չեն, որ կրոնն ամենազգայուն հարցերից է, ուստիեւ ցանկացած կրոնական վեճ հեշտությամբ կարող է ծնել ներքաղաքական հակամարտություն:

Բայց դե, արեւմտյան հովանավորները վաղուց էին Վրաստանի նախագահից պահանջում իրավահավասարություն երաշխավորել բոլոր հարանվանությունների համար: Սահակաշվիլու այս քայլն ապացուցեց նրա հավատարմությունը երկրի արդիականացման ուղեգծին եւ հանուն այդ նպատակի ռիսկի դիմելու նրա պատրաստակամությունը:

Եկեղեցին դրան արձագանքեց աներկբա՝ այն վտանգում է հասարակական բարոյականության ու միակ ազգային եկեղեցու հիմքերը, եւ հոգեւորականությունն ու հավատացյալները կրկին փողոց դուրս եկան: Սրան գումարվեց հայկական եկեղեցական ժառանգության շուրջ վեճերի զգայուն հարցը, որն անմիջապես հրահրեց հակահայկական ելույթների ալիք... Ի վերջո, Սուրբ Սինոդը խորհրդարանին խնդրեց ապագայում կրոնին վերաբերող հարցերում չշտապել եւ բարդություններ չառաջացնելու նպատակով նախապես խորհրդակցել պատրիարքության հետ: Պատրիարքն իր հերթին խնդրեց հետաձգել վերջնական քվեարկությունը, մինչեւ Եկեղեցու հետ քննարկումների ավարտը:

Սահակաշվիլին ընկրկեց:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱՐ 5-ՐԴ

2011-2012-ին Եկեղեցին հրապարակավ հակադրվեց իշխանության ընդունած՝ խտրականության դեմ օրենսդրությանը եւ հայտարարեց, որ «զարգացող հոմոսեքսուալ քարոզչությունն Արեւմուտքից տրված հրաման է»: Այս շրջանում ձեւավորվեց քաղաքացիական շարժումների եւ Եկեղեցու փողոցային ներուժը: 2013 թ. մայիսի 17-ին վերսկսված ցույցերը Սահակաշվիլու համար եղան վերջինը. ավարտին էր մոտենում նրա լիազորությունների ժամկետը: Երբ ԼԳԲՏ+ իրավունքների կողմնակիցները փորձեցին անցկացնել երթ, մի շարք հոգեւորականներ գլխավորեցին դրա դեմ բողոքի գործողությունները, որոնք վերաճեցին զանգվածային բռնությունների: Հուզումներն իրենց խորհրդանշական գագաթնակետին հասան 2013 թ. հոկտեմբերի 27-ի ընտրություններից առաջ, երբ պատրիարք Իլիա Բ-ն լռեց: Նա չաջակցեց Սահակաշվիլու կուսակցությանը, բայց նաեւ դեմ չխոսեց: Վրաստանում պատրիարքի լռությունը միշտ ընդունվել է որպես քաղաքական ազդանշան: Կառավարությունը պարտվեց ընտրություններում:

ՎԵՐՁԱԲԱՆ

Սահակաշվիլին երազում էր ստեղծել արդի ռացիոնալ պետություն, իսկ Եկեղեցին ձգտում էր մնալ ազգի պատմական հիշողության ու բարոյական անաղարտության պահապանի, նրա հոգեւոր կենտրոնի բացառիկ կարգավիճակում: Երկուսն էլ կարծում էին, որ պաշտպանում են Վրաստանը: Բայց նրանք պաշտպանում էին տարբեր Վրաստաններ: Դա էր պատճառը, որ ժողովուրդը մնաց ապագայի եւ հիշողության, բարեփոխման եւ ավանդույթի խաչմերուկում: Սահակաշվիլին պարտվեց, որովհետեւ իր հախուռն խառնվածքի պատճառով չնկատեց, որ Վրաստանում քաղաքական հարցերն ի վերջո հանգում են ինքնության հարցին: Իսկ ինքնությունը Վրաստանում, ինչպես եւ Հայաստանում, անհնար է պատկերացնել առանց Եկեղեցու:

Ներկայում իշխանություն-եկեղեցի հարաբերությունները Վրաստանում գտնվում են պիրկ հավասարակշռության եւ կայուն երկխոսության փուլում: «Վրացական երազանքի» առաջնորդները Սահակաշվիլու նման անշրջահայաց չեն գործում, ու նրանց հաջողվում է փոքր քայլերով զսպել Եկեղեցու ուղղակի ազդեցությունը լուսավորության ու քաղաքականության ոլորտներում: Եկեղեցին հիմա էլ, որպես վստահության ամենաբարձր վարկանիշ ունեցող ինստիտուտ, շարունակում է լինել ազգային ինքնության գլխավոր հենասյունը, իսկ իշխանությունը զգուշորեն պաշտպանում է պետության աշխարհիկ էությունը եւ առանց առճակատման՝ ներդաշնակության մեջ պահում ավանդույթն ու արդիականացումը:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

Հայազգի մարզիկները՝ Օսմանյան կայսրությունում. մաս 2

1910-ական թվականներին միայն Ստամբուլում կար մոտ 40 հայկական սպորտային ակումբ: Նրանց անվանումներում հայկական աշխարհագրությունն էր ու Հայոց պատմությունը. «Արաքս», «Տորք», «Արարատ», «Սիսվան», «Լեւոն», «Մաշտոց», «Կիլիկա», «Սասուն», «Ռաֆի» եւ այլն: Կային նաեւ թաղամասային ակումբներ՝ «Գումգափու», «Սկյուտար» «Մաշտոց», «Սանասարյան»: Գործում էին հայտնի կրթական կենտրոններին կից՝ «Կենտրոնական», «Նիկողոսյան», «Եսայան»: Ակումբները մասնագիտանում էին ֆուտբոլի մեջ, թեթեւ աթլետիկայի, հեծանվային սպորտաձեւի: Հայազգի Վաղարշակ Վարժապետյանն ու Աշոտ Փափազյանը չունեին իրենց հավասարը հեծանվասպորտում, Վահան Չերազն ու Արարատ Քրիստյանը՝ լողում: Վահրամ Շիրանյանը բազմիցս դարձել էր թենիսի թուրքական առաջնության չեմպիոն: Վահան Չերազը վերադարձել էր Անգլիայից՝ ֆուտբոլի կանոնների լավ իմացությամբ, եւ սովորեցնում էր «Կենտրոնականի» իր համադասարանցիներին: Շուտով ակումբը դարձավ պրոֆեսիոնալ: Նրա օգնությամբ այլ ֆուտբոլային ակումբներ էլ ստեղծվեցին: Ստամբուլցի հայ երիտասարդները զբաղվում են ոչ միայն ֆուտբոլով, այլ նաեւ՝ լողով, տուրիզմով, դաշտային խաղերով: 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո ամենից հզոր ակումբերից մեկը «Արաքսն» էր, որտեղ մարզվում էին Օնիկ Ֆրանկյանը, Գարեգին Դարբինյանը, Լեւոն Նարլյանը, Հայկ Չոլոյանը, Համազասպ Փանոսյանը, Պողոս Նասիբյանը, Տատ եւ Միժի Տատյան եղբայրները, Պետրոս Սավայանը, Մարութ Մարությանն ու այլք: «Արաքսը» հաջողությամբ հանդես էր գալիս «Ռումելի» միջազգային լիգայում՝ 1911 թվականին դառնալով մրցաշարի հաղթող: Հայկական մարզական թիմերը մրցում էին հունական, անգլիական, հրեական թիմերի հետ, ունեին սեփական մարզահագուստը, իրենց տարբերանշանները: Բացի Կ. Պոլսից, հայկական սպորտային կյանքն ակտիվ էր նաեւ Օսմանյան կայսրության մյուս քաղաքներում, հատկապես՝ Զմյուռնիայում:

Փարիզում ուսանած Արթուր Էլմասյանը, վերադառնալով հայրենիք, գիմնաստիկա էր դասավանդում Հայկական ազգային վարժարանում: 1900-ին նա սեփական միջոցներով գնել էր մարզական գույք եւ ստեղծել մարզասրահ՝ Մեսրոպյան վարժարանի բակում: 1901-ի հունիսին նա կազմակերպում է ցուցադրական մրցաշար, որը դառնում է ամենամյա, եւ մասնակցում են հարյուրավոր մարզիկներ: Այդ մրցումներն անցկացվում էին գաղտնի: 1905-ին իշխանություններն իմանում են այդ մասին, եւ Էլմասյանը ստիպված է լինում հեռանալ Զմյուռնիայից: Նրա գործը շարունակում են սաները՝ ստեղծելով Մեսրոպյան միությունը:

ԵՐԲ ԱՆԳԱՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՈՒՐԻ

Վերջերս ակնհայտ մշակութային (ոչ քաղաքական) փոքր, բայց կարեւոր գործարք կայացավ: Հայաստանի իշխանությունների ֆինանսական միջամտությամբ ձեռք բերված միջնադարյան Ավետարանը հանդիսավոր արարողակարգով եւ ճոխ համերգային ծրագրով հանձնվեց Մատենադարանին: Շատերը գոհունակություն ապրեցին, երբ հայագիր անգնահատելի, հերթական Ավետարանն իր հավերժական հանգրվանը գտավ Մատենադարանի ցուցասրահում: Սակայն Մատենադարանի տնօրենի երախտիքի խոսքը ոմանք տարօրինակ համարեցին: Չգիտես ինչու, խոսքն ուղղված էր ոչ այնքան Ավետարանի գրիչներին, հնածոն Մատենադարանի սեփականություն ձեւակերպողներին, որքան՝ ՀՀ վարչապետին: Այդպես, մշակութային գործարքը վերածվեց քաղաքական շոուի, այլ կերպ՝ անձնիշխանության ձոներգի: Իսկ Ավետարանը դարձավ ձոներգի առիթ:

Այս իրողությունը հիշեցրեց խորհրդային կուսակցապետական ժամանակաշրջանը, երբ բոլոր մեծ ու փոքր հաջողությունները վերագրվում էին իշխող քաղաքական ուժի «իմաստուն եւ հեռատես» առաջնորդին, անշուշտ, մինչեւ նրա պաշտոնանկումը կամ մահը: Սա արդեն մեթոդոլոգիա է, երբ երկրի առջեւ կուտակված քաղաքական խնդիրները խելամտորեն լուծելու փոխարեն մշակութային գործարքներից են քաղաքական շահաբաժին (դիվիդենտ) ակնկալում: Ակնհայտ է, որ հոգնած, պարզ մարդիկ ստերից ու խելքից դուրս խոստումներից կորցրել են կողմնորոշումը, խարխափում են անորոշության մեջ, իսկ հավատն առ քաղաքական ուժեր եւ իշխանություն՝ շահերի վերլուծության արդյունքն է որոշողը: Ստեղծված իրադրության մեջ ո՞ւմ քիմքին է հասանելի Ավետարանը, Անկախության հռչակագիրն ու Սահմանադրությունը... Չկա պետականության զգացում, կա մտքերի քաոս: Իսկ ինստիտուցիոնալ պետականությունը վերափոխվել, դարձել է արհեստագործական օրախնդիր ծրագրերով զբաղվող համքարություն:

Ի դեպ, նոր սահմանադրության մասին: Գործող Սահմանադրությունը ճիշտ եւ ճիշտ վարչապետի «հագով» է կարված, քանզի երաշխավորում է նրա հավերժ վերարտադրությունը: Միակ խոչընդոտը Անկախության հռչակագրի մասին Սահմանադրությունում մեկ տողով հղումն է: Արժե՞ հարեւան երկրի ղեկավարի պահանջով Սահմանադրությունից հղումը հանելու համար թանկարժեք հանրաքվե անցկացվել: Իսկ ի՞նչ կլինի, եթե պատգամավորական ընդդիմությունը նախաձեռնի արմատապես նոր հայեցակարգով, հիմնովին այլ Սահմանադրություն ստեղծելու գործը, ըստ որի.

1. կվերականգնվի Հայաստանի կառավարման կիսանախագահական համակարգը

2. երկրի նախագահը կլինի Զինված ուժերի գլխավոր հրամանատարը

3. նախագահը երկու անգամ՝ անընդմեջ ընտրվելու իրավունք կունենա՝ յուրաքանչյուր անգամ հինգ տարի ժամկետով

4. նախագահը երրորդ անգամ վերընտրվելու իրավունք չի ունենա

5 ամենակարեւորը՝ նախագահի լիազորությունները կվերահսկեն ԱԺ խորհրդարանը եւ Սահմանադրական դատարանը: Մանրամասնենք. խոսքը նախագահի վետոն հաղթահարելու եւ պաշտոնանկության (իմպիչմենտի) մեխանիզմների եւ որոշ պաշտոնների հարցում նշանակումների մասին է:

Այդպիսի դիմակայությամբ օժտված Սահմանադրությամբ կկանխվի իշխանությունների ջրիկացումը՝ համատարած ստերն ու անհեթեթ խոստումները: Իսկ երկրի ղեկավարն օտար երկրների պաշտոնյաների հետ կգործակցի առանց խոնարհվելու: Ինչ վերաբերում է ՀՀ Անկախության հռչակագրին, ապա Հռչակագիրն ամբողջությամբ եւ իր մասին հղումը ՀՀ Սահմանադրության մեջ՝ անուրանալի է:

Փաստենք, որ առկա ՀՀ Անկախության հռչակագիրը չի մոռացվել: Օգոստոսի 22-ին կայացավ Գխ եւ ԱԺ նախկին պատգամավոր Արամ Մանուկյանի կազմած «Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրի 35 ամյակը» ժամանակագրական փաստաթղթերի ժողովածուի շնորհանդեսը: Ժողովածուն փաստարկում է, որ Հայոց անկախ պետականությունը կերտվել է ոչ թե դրսի ուժերի դրդմամբ, այլ համայն հայության գիտակցությամբ եւ համահավաք ջանքերով՝ որպես Հայոց անկախ պետականության ծննդյան վկայական:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՍԼԱՆՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵՐԿՐՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ

Բրիտանական gbnews.com կայքն անդրադարձել է Հայ առաքելական եկեղեցու եւ ՀՀ գործող իշխանությունների առճակատմանը եւ Հայաստանում տիրող ներքաղաքական իրավիճակին: Ըստ հրապարակման, աշխարհի առաջին քրիստոնեական երկրում Եկեղեցին ենթարկվում է հալածանքների. 3 հայտնի եկեղեցականներ կալանավորված են:

Հղում անելով Հայաստանում քաղաքացիական անկարգությունների մասին զեկույցին՝ հրապարակման հեղինակները նշում են, որ Հայաստանում դավանանքի ազատության իրավունքը վտանգված է: Վարչապետ Նիկոլ Փաշինյանին մեղադրում են բռնապետական գործողությունների եւ Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ ոտնձգությունների մեջ: Փաշինյանը, ըստ հոդվածի, փորձում է գահընկեց անել Գարեգին 2-րդ կաթողիկոսին, բանտարկել է հոգեւորականների, հավատացյալների: Արքեպիսկոպոս Միքայել Աջապահյանը 2 տարվա ազատազրկման է դատապարտվել՝ կառավարությանը քննադատելու համար: Գործարար Սամվել Կարապետյանն էլ է բանտարկվել՝ Եկեղեցուն պաշտպանելու համար: Նրա ակտիվները Հայաստանում, ներառյալ էլեկտրամատակարար ընկերությունը, կալանքի տակ են վերցվել: Կարապետյանը գտնվում է Երեւանի՝ դեռ խորհրդային ժամանակների տխրահռչակ բանտում:

Պիթերբորոյի լորդ Ջեքսոնը՝ դավանանքների ազատության խորհրդարանական միջկուսակցական խմբի փոխնախագահը, հայտարարել է. «Միտքն առ այն, որ աշխարհի հնագույն քրիստոնեական երկրում Եկեղեցու նվիրյալ հավատացյալներին նետում են բանտ՝ հանուն իրենց հավատքի, ժամանակակից քաղաքակիրթ Եվրոպայում ուղղակի սարսափեցնող է»: «Հայաստանում քրիստոնեական դավանանքները պետք է հնարավորություն ունենան՝ պահպանելու իրենց իրավունքը՝ հավաքվելու եւ խաղաղության մեջ աղոթելու, բռնությունների ենթարկվելու եւ բանտարկվելու սպառնալիքից կամ այլ որեւէ լուրջ սպառնալիքից զերծ: Աշխարհը հետեւում է մարդու իրավունքների խախտումներին, որոնք իրականացվում են այդ քրիստոնեական համայնքներում, որոնք գտնվում են բարդ վիճակում»,- ասել է Պիթերբորոյի լորդը:

Amsterdam & Partners իրավաբանական ընկերության կազմած միջազգային զեկույցում ասվում է, որ Նիկոլ Փաշինյանը մեղադրվում է բռնապետական գործողություններում եւ փորձում է այդկերպ պահպանել իշխանությունը հաջորդ տարվա ընտրություններում: Հայ առաքելական եկեղեցին շարունակում է լայն ժողովրդականություն վայելել, եւ Հայաստանի բնակչության 97,5 տոկոսը հայտարարում է, որ առաքելադավան է: Եկեղեցու հանդեպ վստահությունը կազմում է 60 տոկոս: Հոդվածում նշվում է նաեւ, որ Եկեղեցու եւ իշխանությունների միջեւ հակասությունը սկսվել է 2023-ին՝ Լեռնային Ղարաբաղի հայաթափումից, երբ ավելի քան 100 հազար հայ ստիպված է եղել փախչել Հայաստան:

«Եկեղեցին իրականացրել է իր բացառիկ առաքելությունը եւ վճռականորեն պաշտպանել է հայերի իրավունքները, ովքեր արտաքսվել են Լեռնային Ղարաբաղից, ինչպես նաեւ՝ պահպանել է ազգային ինքնությունը: Դա ՀԱԵ-ն հակասության մեջ է դրել վարչապետի հետ, որը երկրի ներսում եւ արտերկրում խիստ քննադատության է ենթարկվել ԼՂ-ն պաշտպանել չկարողանալու համար»,- ասված է զեկույցում: Ռեգիոնալ հարցերով փորձագետ եւ լրագրող Էլիսոն Մյոզն էլ հայտարարել է, որ Եկեղեցին նման հալածանքների է ենթարկվել նաեւ սովետական ամենադաժան զտումների ժամանակ, եւ կարծես թե պատմությունը Հայաստանում կրկնվում է:



Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Մեզ ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ Է ՊԵՏՔ

Եթե հավատանք ավանդապատումին, իսկ դրան ողջամիտ հակափաստարկներ չկան, ապա մարդկության պատմության մեջ առաջին մարդուն՝ Ադամին, Աստված գոյավորեց աշխարհի ստեղծման վեցերորդ օրը եւ ստեղծեց Իր պատկերով եւ նմանությամբ ու նրան իշխանություն տվեց ամբողջ աշխարհի վրա: Տեսնելով, որ Ադամն օգնականի-ընկերոջ կարիք ունի, Աստված նրա կողոսկրից երկնեց առաջին կնոջը՝

պատգամելով եդեմական կյանք: Մնացյալը գիտեք. սատանան գայթակղեց կնոջը՝ ճաշակելու Արարչի կողմից արգելված ծառի պտուղը, նա էլ Ադամին համոզեց: Զանցանքի համար Ադամը մեղադրեց կնոջը, իսկ կինը՝ օձին: Այդժամ Աստված բարկացավ եւ նրանց արտաքսեց դրախտից: Փաստորեն, Ադամը հավատաց կնոջ «խոսքին», ճակատագրականը խո՛սքն էր՝ կնո՛ջ խոսքը:

Մարդաստեղծության այս մոդելը, հավատացեք, չի փոխվել: Ո՛չ խոսքի ուժի, ո՛չ էլ կնոջ դերակատարման առումով: Ընդունված է, չէ՞, ասել, որ կանայք սովորաբար շատ են խոսում: Պնդման հետ լիովին համամիտ չլինելով նշեմ, որ կնոջ խոսքն ավելի հասցեական ու նպատակային է, կնոջ լռությունն էլ խոսուն եւ ազդեցիկ է: Նա խոսում կամ լռում է այնքան, մինչեւ իրեն «լսեն, հասկանան, ընդունեն»՝ լինի ընտանեկան-կենցաղային, հանրային, թե պետական մակարդակ: Վերցրեք ցանկացած կնոջ եւ ցանկացած պետության օրինակ: Մարդկության պատմության մեջ քիչ չեն կին առաջնորդները, որոնց լսել են, լսում են, որոնց խոսքը նույնչափ զորավոր ու համոզիչ է, որքան՝ Եվայինը: Սիրում ենք ասել նաեւ, որ կինն «ականջներով» է սիրում: Եվ, ուրեմն, հենց խո՛սքն է զորավոր եւ այնքանով, որքանով նրան զորացնում են: Խո՛սքն է մղում գործի, գործողությունների:

Իսկ չե՞ք կարծում, որ կնոջ պես եւ գուցե ոչ նրանից պակաս ժողովուրդներն էլ են «ականջներով» սիրում: Ժողովուրդներն առաջնորդներ եւ կառավարիչներ են ընտրում՝ անսալով նրանց խոսքը, քրեստոմատիկ ճշմարտություն է՝ ի սկզբանե բանն էր, նախ՝ խոսքն էր: Հենց ժողովրդի՝ «ականջներով սիրելու» «թուլությունից» օգտվեց Նիկոլ Փաշինյանը 2018-ի հայտնի իրադարձությունների ժամանակ: Դրան նախորդած խոսքերն էին «արմատավորվել» ժողովրդի ենթագիտակցության եւ ցգացական դաշտում: Այդ մենթալ կոդերով Նիկոլը եկավ իշխանության եւ հենց դրանցով է առաջնորդվում նաեւ այսօր՝ մի ամբողջ ժողովրդի գլխին բերելով բազում կորուստներ ու ձախողումներ: Իսկ գուցե նրան տապալելու ձախողման արմատական պատճառը հենց մեր վիրտուալ ու հրապարակային շաղակրատությունն է, որ հաճախ ընկալվում է որպես ուղիղ խոսք: Համոզված եղեք՝ այս խառնակ օրերում մեզ հենց իրական ու ճակատագրական խոսքն է պակասում, հենց դա է մեզ պետք: Եկեք ապավինենք կնոջն ու նրա խոսքին: Հայաստանին օր առաջ կին առաջնորդ է պետք՝ վճռական խոսքով, որը գործի արժեք ունի:

Արա ԱԼՈՅԱՆ

Վրաստանը դեղին քարտ է ցույց տալիս Եվրոպային

Հոկտեմբերի 28-ին Երեւանում կայացավ «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովը: Իսկ հաջորդ տարվա մայիսի 4-ին Հայաստանն ընդունելու է «Եվրոպական քաղաքական համայնքի» գագաթնաժողովը, որը յուրատեսակ «Եվրամիություն+» ֆորմատ է: Երեւանը, ըստ էության, ինչպես գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը, ցույց է տալիս, որ պատրաստակամ է՝ ավելացնելու գործակցությունը «միացյալ Եվրոպայի» հետ: Իսկ Հայաստանի ամենամոտ հարեւան Վրաստանի դեպքում ճիշտ հակառակն է: Պաշտոնական Թբիլիսին որոշեց ոչ միայն չմասնակցել հոկտեմբերի 28-ի գագաթնաժողովին, այլ նաեւ առհասարակ դադարեցնել իր մասնակցությունը «Եվրանեսթի» ֆորմատին:

Վրաստանի խորհրդարանի խոսնակ Շալվա Պապուաշվիլին հայտարարեց, որ որպես ֆորմատ՝ «Եվրանեսթը» կորցրել է իր բալանսավորվածությունը եւ որպես հարթակ՝ դադարել է ծառայել Եվրախորհրդարանի եւ Արեւելյան գործընկերության խորհրդարանների միջեւ կառուցողական երկխոսությանը: Ի դեպ, Պապուաշվիլին այսօր, կարելի է ասել, դարձել է գլխավոր «եվրասկեպտիկը» վրացական քաղաքական վերնախավում: ԵՄ-Վրաստան ներկայիս լարված հարաբերությունների փուլում նման կեցվածքը լիովին հասկանալի է, երբ, պատկերավոր ասած, Արեւմուտքը Վրաստանի «լուսավոր ապագայի» մասին իր պատկերացումն ունի թերեւս, իսկ Վրաստանի իշխող «Վրացական երազանքը»՝ իր: Ու քանի որ այդ պատկերացումները, մեղմ ասած, չեն համընկնում, ապա Վրաստանի իշխանությունները ձգտում են իրենց մասնակցությունը հասցնել նվազագույնի այնպիսի ֆորմատներում, որոնք իրենց համար քիչ հարմարավետ են: Իսկ նման քիչ հարմարավետ ֆորմատները եւ ԵԽԽՎ-ն է, որի աշխատանքներին Վրաստանը դադարեցրել է իր մասնակցությունը այս տարվա հունվարից, եւ հիմա արդեն՝ «Եվրանեսթը»: Սակայն ասել, թե Վրաստանը կտրուկ արտաքին քաղաքականության շրջադարձ է կատարում, սխալ կլինի: Վրաստանը հիմա պարզապես սառեցնում է իր մասնակցությունն այն բոլոր ֆորմատներում, որտեղ իր համար տհաճ է, ոչ հարմարավետ, որտեղ կարող է վատ վիճակում հայտնվել: Պարզ ասած՝ ներկա փուլում Թբիլիսին պարզապես ժամանակավոր «դադար է վերցնում»: Ու հապճեպ եւ սխալ կլինի այդ «ժամանակավոր դադարը» որպես արեւմտյան ընտրության փոփոխություն մեկնաբանելը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն

Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՐԿԻՐՆ ԱՌԱՆՑ ՆԻԿՈԼ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

Հովհաննավանքի վերջին իրադարձությունները ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու, այլ նաեւ առանց Նիկոլ ապրելու օրակարգի մասին էին: Դրանց սակավամարդությունը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ նիկոլական վարչախմբի բռնաճնշումների քաղաքականությունը չպաշտպանելուց բացի, նաեւ երկիրը չարդյունաբերականացնող, բանակի բարեփոխումները բանակի մարտունակության բարձրացման տրամաբանությամբ չիրականացնող, սեփականության իրավունքն ըստ իրենց ճաշակի ու ըստ իրենց պատկերացման մեկնաբանող իշխանությունների քաղաքականությունը չընդունելու մասին էր նաեւ:

Այս իմաստով, Հովհաննավանք չգնացած ժողովուրդը, ըստ էության, «ոչ» ասաց ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու դեմ նիկոլական խմբակի ոտնձգություններին, այլ նաեւ մերժեց հասարակությունը սեւերի ու սպիտակների, Հայ առաքելական եկեղեցին լավ եւ վատ եկեղեցականների բաժանելու նիկոլական քաղաքականությունը:

Այս առումով Մայր Աթոռի, Գյումրու եւ Հովհաննավանքի ձախողումները ո՛չ պետության եւ ո՛չ էլ հայ հասարակության ձախողումները չէին: Դրանք միայն ու միայն Նիկոլի ու նիկոլական խմբակի ձախողումներն ու նրանց քաղաքականության ձախողված լինելու վկայություններն էին: Ու այդ ձախողումներն իշխանական խմբակի համար չեն վերջանալու, դրանք նրանց համար շարունակական են լինելու:

Շարունակական են լինելու, որովհետեւ երկիրն այլեւս առանց Նիկոլի օրակարգի ապրելուն է սովորել, որովհետեւ երկիրն արդեն ոչ թե ասֆալտ փռողներին, այլ գործարաններ հիմնողներին գնահատել է սովորել, որովհետեւ երկրի հերոսն այսօր ոչ թե խաղադրույքներ անողն ու ռեստորաններում գինարբուք սարքողն է, այլ երկիր կառուցողն ու երկիր հզորացնողն է դարձել:

Այդ ձախողումները վերջ չեն ունենալու նաեւ այն պատճառով, որ երկիրն իր 33 ու ավելի տարիների փորձից հասկացել է, որ լավ դպրոց ու լավ համալսարան միայն վերագործարկված կամ նոր հիմնադրված գործարաններով է հնարավոր պահել, որ իսկական կրթական բարեփոխումները միայն արդյունաբերական տնտեսություն ու ժամանակակից գյուղատնտեսություն ունենալով է հնարավոր իրականացնել, որ առանց արդյունաբերության ու գործարանի ո՛չ լավ դպրոց, ո՛չ էլ լավ համալսարան, առանց ժամանակակից գյուղատնտեսության ո՛չ հաջողված կրթական բարեփոխում եւ ո՛չ էլ արդյունավետ պետական համակարգ չենք ունենալու:

Այս առումով, երկիրն այլեւս նոր օրակարգի ու նոր օրակարգով ապրելու մասին է մտածում: Այն օրակարգի, որն այլեւս ո՛չ խլելու եւ ո՛չ էլ խաբելու, ո՛չ մանիպուլացնելու եւ ո՛չ էլ Արեւմուտքի ու Ռուսաստանի միջեւ ընտրություն կատարելու մասին չէ: Դա օրակարգ է, որը, թեեւ ընտրության, բայց ոչ թե Ռուսաստանի եւ Արեւմուտքի, այլ նրանց եւ Հայաստանի միջեւ ընտրությանն է վերաբերում:

Այդ օրակարգը նաեւ խլելուն կամ չխլելուն չվերաբերող եւ, հակառակը՝ միայն երկրի արդյունաբերականացմանը կամ դրա չարդյունաբերականացմանը վերաբերող քաղաքականությունների միջեւ ընտրություն կատարելուն վերաբերող օրակարգ է:

Այլ խոսքով, դա ինչքան առանց Նիկոլի ու առանց նիկոլիզմի, ինչքան «խաղաղություն, թե պատերազմ» ընտրություն չկատարելու, այնքան էլ բռնաճնշումներից ազատ պետություն ունենալու մասին օրակարգ է:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am